Юридическую помощь членам профсоюзов оказывают юридические консультации профсоюзов, штатные юристы первичных профсоюзных организаций, другие профсоюзные работники по следующим вопросам:

- трудовые права работников;
- права работников по социальному обеспечению;
- помощь работникам в оформлении заявления в КТС, в суд;
- представительство работников в КТС и судах;
- помощь работникам в оформлении заявлений:
 - ❖ о перечислении профвзносов в бухгалтерию предприятия;
 - ❖ о досрочном снятии дисциплинарного взыскания;
 - ❖ о получении ссуды на предприятии;
 - ❖ о получении материальной помощи;
 - ❖ о перечислении зарплаты на счёт в банке;
 - ❖ о постановке на учёт для получения жилья на предприятии и др.

Участие профсоюзов в установлении условий трудовых договоров.

Профсоюзы вправе участвовать совместно с кандидатом в работники в переговорах с представителями работодателей в установлении условий трудовых договоров при трудоустройстве только в том случае, если это право зафиксировано в коллективном договоре (см., например, коллективный договор ООО «ЛУКОЙЛ-Пермь» на 2004 год), поскольку закон не предусматривает такого права гражданам.

Ответственность работодателя за нарушения законодательства о труде и формы реагирования профсоюзов на эти факты.

Руководители и иные должностные лица организаций, виновные в нарушении трудового законодательства и иных нормативных правовых актов, содержащих нормы трудового права, несут ответственность в случаях и порядке, которые установлены федеральными законами (ст. 362 ТК РФ).

Лица, виновные в нарушении трудового законодательства, привлекаются к дисциплинарной, гражданско-правовой, административной (ст. 5.27. КоАП РФ) и уголовной (ст. 143 УК РФ) ответственности в порядке, установленном федеральными законами (ст. 419 ТК РФ).

Анна МЕЛКУМОВА,
юрисконсульт Московского областного объединения организаций профсоюзов.

В Приднестровье создан Союз армян

24 апреля в городе Григориополь создан Союз армян Приднестровья (САП), куда вошли представители армянских общин городов Григориополь, Тирасполь (столица Приднестровья) и Дубоссары.

Как сообщили в пресс-службе новосозданного САП, в дальнейшем планируется включение представителей общин городов Бендеры, Рыбница и Каменка. Председателем правления Союза армян избран тираспольский бизнесмен Гегам Геворгян. В состав правления вошли Роберт Киракосян (врач из Григориополя), Николай Сеферьянц (бывший председатель Совета народных депутатов Григориопольского района), Тамара Шагоян (преподаватель Тираспольского теоретического лицея № 1), Эрнест Варданян (сотрудник радио Приднестровья, г. Тирасполь), а также представители Дубоссарской общины. Помимо правления, создан совет общины, который будет собираться два раза в год - 24

апреля (День памяти жертв геноцида армян) и 13 октября (День первопрестольного Григория Просветителя).

Согласно источнику, на собрании 24 апреля представители армянской общины Приднестровья почтили минутой молчания память жертв геноцида армян в Османской империи, а также возложили цветы на старом армянском кладбище Григориополя.

По разным данным, в Приднестровье проживает не менее тысячи армян. Первое армянское поселение появилось здесь 25 июля 1792 года, когда по указу российской императрицы Екатерины Второй был основан город, в создании которого приняли участие армянские переселенцы. В честь первого Католикоса Всех Армян Григория Просветителя поселение получило название Григориополь.

ԿՈՉԵՄ ԱՊՐՈՂԱՅ...



Խորհրդավոր հեծյալը

Երբ երկուների ցավերը մեղմացան, կինը, ճիգ գործադրելով, նստեց և նայեց հեռացող թափորի հետևից: Անապատի այրող արևից կարծես թափանցիկ էին դարձել: Շուտով ամեն ինչ անեացավ: Մնացին ավազի վրայով դեպի անհայտություն ձգվող ոտնահետքերը: Քանի դեռ մարդիկ էին երևում, հույսը չէր կորցնում թե մեկնումեկը հետ կդառնա: Սակայն թուրք զինվորները քշում էին: Ծերունիներ ու երեխաներ էին մնացել: Քայլող դիակներ: Ծարավից, քաղցից ու հոգնածությունից ուրվակամացած մարմիններ... Երբ թափորն անհետացավ ավազաբլրի հետևում, խուճապի մեջ ընկավ: Որովայնում խլրտացող էակն ստիպում էր մտածել ապրելու մասին: Հաղթահարելով ցավերն ու թուլությունը՝ ոտքի ելավ, փորձեց շարժվել հեռացող կյանքի հետևից: Հանկարծակի ծնված մենակության գագաղությունը սարսափեցնում էր: Ողջ ուժերը լարելով, անցավ մի քանի մետր, ապա կանգ առավ: Շուտով կտրվում էր: Ոտքերը ծալվում էին: Երբ նորից սկսվեցին երկուների ցավերը, մոռանալով ամեն ինչ, ընկավ շիկացած ավազների վրա, սկսեց գալարվել: Շուտով ծննդաբերելու էր: «Տեր Աստված, – մտածում էր, – ինչո՞ւ է ծնվում այս երեխան: Չէ՞ որ ապրելու ոչ մի հույս չկա: Մի՞թե դու չգիտեիր, Տեր...»: Սակայն մայրական բնագոյը նրան մղում էր ծննդաբերելու և պահպանելու զավակի կյանքը: Երբ սկսվում էին երկուների ցավերը, նա ուժ էր տալիս՝ աշխատելով ծնել երեխային: Իսկ երբ ընդհատվում էին, հիշում էր ամուսնուն: Նրան գյուղի տղամարդկանց հետ զինվորագրեցին, տարան պատերազմ: Հետո լուրեր էին պտտվում, թե բոլորին գնդակահարել են: Մեծ ցավ էր: Ողջ գյուղով ողբում էին: Քայց եկավ ավելի մեծ ցավը, և մոռացնել տվեց տղամարդկանց մասին: Ինքն իրեն ստիպում, պարտադրում էր հիշել ամուսնուն, իրենց մեծ սերը: Սիրո հրաշք օրերը: Ուզում էր մեռնել այդ հիշողությունների հետ: Գիտեր, որ մեռնելու է այս անծայրածիր, այս անտեր անապատում, մենակության մեջ և անընդհատ մտածում էր նրա մասին, որ վանի մենակությունը: Ցավը գնալով անտանելի էր դառնում: Ծարավն ու շոգը լրացնում էին պակասը: Վախենում էր գիտակցությունը կորցնելուց: Անհանգստանում էր երեխայի համար: Մայրական բնագոյն ուժ էր տալիս: Հինգերորդ զավակն էր՝ ծնելու փորձ ուներ: Աչքի առջև էին գալիս երեխաները: Երկուսը Մեծ Մայրիկի հետ նահատակվեցին ճանապարհին: Աղջկան քրոջը տարան: Վերջինը զնց քարավանի հետ: Գոնե Աստված նրան կյանք տար: Ծնունդը զարմանալիորեն հեշտ եղավ: Ճիգ գործադրելով նստեց, ձեռքերի մեջ առավ նորածինին: Տղա էր: Հուզվեց: Ցամաքած մարմնից դուրս հորդացին վերջին արցունքները: Մինչև հիմա գիտեր, որ պիտի ծներ: Սակայն ծնելուց հետո չգիտեր անելիքը: Մի՞թե պիտի պառկեր ու մեռներ նորածնի հետ: Առողջ երեխա էր: Շուրթերով կուրծքն էր փնտրում: Իսկ կրծքերում կաթ չկար: Երեխան ճչում էր: – Տեր Աստված..., – գոռաց կինը, և նրա ձայնը կորավ անապատի շիկացած, թշնամի ավազների մեջ: Վերջին ուժերը լարելուց սպառվեց: Կարծես ճիչի հետ կյանքը դուրս եկավ մարմնից: Գիտակցությունը կորցրեց: Երբ ուշքի եկավ, սոսկումով տեսավ շուրջը հավաքված գիշատիչ թռչուններին: Թուլացած ձեռքը մի կերպ բարձրացրեց, քչեց: Թռչունները փոքրիկ ցատկերով հեռացան, բայց պատրաստ սպասում էին: Միտքն այլևս չէր գործում: Հաճախակի կորցնում էր գիտակցությունը: Վերջապես մղձավանջը կուլ տվեց: Հեռվում երկու ձիավորներ էին երևում: Կնոջը թվում էր, թե տեսիլք է, բայց ամեն ինչ իրական էր: Թուրք և գերմանացի սպաները գնում էին կազմակերպելու: Դեռ Ջորջի անապատում հավաքված հայերի տեղաշարժը: Երբ հասան կնոջ մոտ, գերմանացի սպան իջավ ձիուց: Գիտակցությունը կորցրած կինը դեռ բնագոյաբար շարժում էր ձեռքը՝ կրծքին լացող երեխային գիշատիչ թռչուններից պաշտպանելու համար: – Ինչպիսի՞ տեսարան..., – հիացած բացականչեց գերմանացի սպան, – կնոջ տեսիլքն ամեն ինչ ասելի լուսանկարների համար: Արդեն մի հարյուր հատ ուղարկել են, – և շտապ հանեց լուսանկարչական ապարատը: – Ի՞նչ հետաքրքիր բան կա այստեղ, – քրքջաց թուրք սպան, – ճիշտ են ասում, որ

դուք՝ եվրոպացիները, ամեն փուլ բանի մեջ խորիմաստ փիլիսոփայություն եք փնտրում: Տարված հետաքրքիր տեսարանով, նրանցից ոչ մեկը չէր նկատել բլրի հետևից անապատի հայտնված հեծյալին: Երբ մոտեցավ, գերմանացին աշխատեց թաքցնել լուսանկարչական ապարատը: – Մի վախեցիր, – նորից բարձր ծիծաղեց թուրք սպան, – մերոնցից կլինի: Աշխարհիս երեսին էլ հայ չի մնացել: Վերջին հայը, ինչպես տեսնում ես, դեռ աշխարհ չէ կած, մեռնում է: – Մխավում ես, – մոտենալով անապատի ասաց հեծյալը, – ինչքան էլ սպանեք, մի հայ միշտ կգտնվի, որ առնի բոլոր հայերի վրեժը: Թուրք սպան փորձեց հանել ատրճանակը, բայց հեծյալը կանխեց նրան: Թուրքը հայիոյելով աշխատում էր մյուս՝ առողջ ձեռքով, պատյանից դուրս քաշել զենքը, բայց հեծյալը նորից կրակեց: – Այդ ձեռքերի վրա շատ անմեղ մարդկանց արյուն կա, թող մաքրվեն, – հանգիստ, առանց ձայն բարձրացնելու ասաց հեծյալը: Նրա ներքին խաղաղությունը և ինքնավստահությունը սարսափազդու էր: Խուճապահար գերմանացին չգիտեր անելիքը: Նույնիսկ մոռացել էր, որ ինքը ևս զենք ունի: Համակերպված սպասում էր, թե երբ է հեծյալը կրակելու նա իր վրա: Թուրքը, վիրավոր ձեռքերը կրծքին սեղմած, ողբում էր և հայիոյում հայերին: – Ձեռքդ հանձնիր, – հեծյալը դիմեց գերմանացի սպային, – դու արժանի չես այն կրելու, որովհետև արատավորել ես սպայի պատիվը: Գերմանացին լուռ հնազանդությամբ զենքը մեկնեց հեծյալին: – Ընկերոջդ զենքը նույնպես, – ասաց հեծյալը: – Եվ երկուսիդ սպայական համազգեստը, այն կրելը չափազանց մեծ պատիվ է ձեզ համար: Թուրքն արնաքամ էր լինում: Երկու ձեռքերի դաստակները հրացանազարկից փշրվել էին: Եթե անհապաղ չվիրակապվեք, այրող արևի տակ երկար չէր դիմանալու: Լաց լինելով՝ օգնություն էր խնդրում: – Իսկ դու կօգնե՞իր... Հապա ինչո՞ւ չօգնեցիր այս մեռնող նորածնին, – ասաց հեծյալը, – մտքովդ անգամ չանցավ: Գերմանացի սպան, լավ հասկանալով, որ առանց ձիերի և ջրի պաշարի իրենք դատապարտված են, կորցնելով արժանապատվության վերջին փշրանքները, ծնկի իջավ ողբացող թուրքի կողքին և սկսեց աղաչել հեծյալին: – Մի վախեցիր, – ասաց հեծյալը, – ես ձեզ չեմ սպանելու: Դուք արժանի չեք այդպիսի մեծ պարգևի: Պիտի մեռնեք այն մամիկների ու ծերունիների նման, ովքեր հինգ ոսկի են տալիս, որպեսզի իրենց գնդակահարեն, ազատեն դժոխային տառապանքից, բայց ոսկին առնելով՝ չեն գնդակահարում... Թողնում եք, որ մեռնեն երկար ու տանջալից մահով: Իսկ դու, մի կու՞մ ջուր տալու փոխարեն լուսանկարում ես... Դու, որ քրիստոնյա ես: Թուրքը, գիտակցությունը կորցնելով, ընկավ ավազներից: Գերմանացի սպան փորձում էր օգնություն ցույց տալ՝ գիտեր, որ առանց նրան չի կարող ճանապարհ գտնել: Հեծյալն իջավ ձիուց, մոտեցավ կիսամերկ կնոջն ու նորածնին: Դեռ շնչում էին: Կինը, երեսին լցված ջրից ուշքի եկավ, մշուշված հայացքով նայեց նրան: Թվաց, թե ամուսինն է: Անգոր շուրթերը շշմուշացան ամուսնու անունը: Սկսեց լաց լինել: Ապա անմիջապես հիշեց երեխային: – Մի անհանգստան, – ասաց հեծյալը, – Աստված կամեցավ, որ դուք ապրեք: Քիչ հետո հեծյալը հեռանում էր՝ իր հետ տանելով կնոջն ու երեխային: Մի պահ ուշքի եկած թուրքը վերջին անգամ հայիոյում էր: Գերմանացի սպան հուսահատությունից լաց էր լինում...

Չոպիկ ՎԱՐՂՈՒՄՅԱՆ

Ո՞ՒՄ Է ԱՐԱՐԱՏԸ

Թուրքիայի Ազգային ժողովի 85-ամյակի առթիվ բոլոր քաղաքներից պահանջվել է խորհրդանշական մանրաքանդակներ ուղարկել Աճկարա՝ հատուկ ցուցահանդեսում ներկայացնելու համար: Թե՛ Աղբրի, թե՛ Իզմիրի քաղաքապետարանները ուղարկել են Արարատ լեռան մանրաքանդակներ, որի կապակցությամբ կռիվ է ծագել: Երկու վայրերի խորհրդարանականները պահանջել են մրցակցին հեռացնել ցուցահանդեսից, պնդելով, որ «Արարատն իրենցն է»: Հետո կռիվը շարունակվել է փոխադարձ սպառնալիքներով: Քաղազում լույս տեսնող «Յառաջն» այդ կապակցությամբ ուշք է: «Վստահաբար նման նախընթացի մըն էր Աստուծոյ զարմանքը՝ գողին գողէն գողնալուն դէմ»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՄԱՏՅԱՆ



Աշոտ Ղուկասյանի ջանքերով լույս է տեսել մի գիրք, որ նվիրված է իր ծննդավայրից, Իջևանի շրջանի Աչաջուր գյուղից Հայրենական մեծ պատերազմում զոհված զինվորների հիշատակին: Այնտեղ ամփոփված են 251 նահատակների լուսանկարները, կամ նրանց դատարկ շրջանակները հետևյալ համառոտ ծանոթագրությամբ՝ ազգանուն, անուն, հայրանուն, ծննդյան և զոհվելու թվական, ամուսնացած կամ չամուսնացած լինելը: Հեղինակը Հայրենական պատերազմի 60-ամյակին նվիրված այս անտյանում զետեղել է նաև խորհրդային բանակում ծառայության ժամանակ, խաղաղ պայմաններում զոհված ութ աչաջուրցի զինվորների, ինչպես նաև Արցախյան ազատամարտում նահատակված ու հաշմանդամ դարձած ինը ազատամարտիկների լուսանկարները և այն անվանել «Հավերժության լուսամատյան»: Հրատարակության այս բացառիկ հնարանը առաջին հայացքից կա-

րող է թվալ աղքատիկ և քիչ բան ասող, սակայն նկատենք, որ եթե յուրաքանչյուր դարում, Հայոց աշխարհի յուրաքանչյուր բնակավայրում ծնվեր Աշոտ Ղուկասյանի պես նվիրյալ մտավորական, ապա հայրենիքի ազատագրության համար զոհված ոչ մի մարտիկ անանուն ու անհիշատակ չէր մնա: 60-ամյա վաղեմություն ունեցող այդ խունացած լուսանկարները փայփայողներն ու պաշտողները, նրանց որդեկորույս ծնողները վաղուց արդեն չկան: Չկան նաև նրանց զինակիցներն ու սերնդակիցները: Ա. Ղուկասյանը իրոք երկար տարիների ընթացքում է փնտրել, մոռացությունից ու փոշու տակից հանել զոհվածների հարգատեմերի խրճիթների պատերից արդեն իջեցված լուսանկարները, նրանց մասին հավաքել տվյալներ ու զետեղել այս լուսամատյանում ու վերըստին, այժմ արդեն հավերժական կյանք տվել նրանց: Այս մատյանով հաղորդակցվում ենք նաև մի շատ տխուր իրողության: Պարզվում է, որ պատերազմական մահաբեր տարածաշրջանից շատ հեռու Աչաջուր գյուղի շատ գերդաստաններ անվոր չափերի կորուստներ են ունեցել: Լեռնային գյուղի մի գերդաստանից՝ Եգանյանների գերդաստանից զոհվել են 21 հոգի, Գասպարյանների գերդաստանից՝ 17-ը, Սարուխանյաններից՝ 14-ը: 11-ական որդիներ են զոհաբերել Փիրումյանները, Վարդումյանները, Ղաթախչյանները, 9-ական՝ Մելիք-ջանյանները, Մելիքբեկյանները, Աղբալյան-

ները և Աթաբեկյանները: Մի քանի գերդաստաններ՝ Հաբուլյանները, Կորխմազյանները, իրենց անժառանգ զավակների զոհվելով մարել են: Այսքան զոհերն ու նրանց լուռ ու խունացած լուսանկարները պերճախոս վկաներն են այն մեծ հաղթանակի, որ միլիոնավորների հետ կերտեցին Աչաջուրից պատերազմ մեկնած 500 և Իջևանի շրջանից պատերազմ մեկնած 2525 մարտիկները: Նրանցից երկուսը՝ Ռուբեն Հակոբյանը և Իշխան Սարիբեկյանը, արժանացան Խորհրդային Սիռիայի հերոսի կոչման: 1220 զինվորի շնորհիվ են շքանշաններ ու մեդալներ, որոնցից 82-ին՝ Կարմիր Աստղի շքանշան: Պատերազմի ընթացքում 8 հրամանատարներ արժանացել են գնդապետի կոչման: Նրանց հրամաններով ու անձնական քաջագործություններով են նաև կերտվել այդ մեծ հաղթանակները: Անձնվոր աշխատանքով աչքի են ընկել նաև թիկունքի աշխատավորները: Աչաջուրցիների նախածնունդով են ստեղծվել Իջևանի շրջանի կուլտրնտեսականների տանկային շարասյունը, որի ֆունդին հատկացրել են 12 կգ արծաթ, 400 կգ պղինձ, 4500 ռուբլի կանխիկ դրամ և 300 աշխօրի եկամուտ: Ահա ոչ լրիվ ցանկը այն ներդրումների, որ կատարել է Աչաջուրը Հայրենական մեծ պատերազմում:

**Դենգել ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ,
փիլիսոփայական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր**

ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայերի համար Հայաստանը զնալով անցանկալի երկիր է դառնում: Ավելացել է ոչ միայն արտագաղթողների թիվը, այլ նաև շատացել են ՀՀ քաղաքացիությունից հրաժարվող անձինք: Ու սա այն դեպքում, երբ դրան զուգահեռ զնալով նվազում է ՀՀ քաղաքացիություն ստացողների թիվը:

ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության պետ, փոխգնդապետ Ալվինա Ջաքարյանի տվյալներով, մայիսի տարի ՀՀ նախագահի հրամանագրով ՀՀ քաղաքացիություն է շնորհվել 248 մարդու: Իսկ ՀՀ քաղաքացիությունից 2004 թվականին հրաժարվել է 425 մարդ: Իսկ այս տարվա առաջին եռամսյակում էլ ՀՀ քաղաքացիությունից հրաժարվածների թիվը կազմել է 126 հոգի: «Քաղաքացիությունից հրաժարվածների թիվն ավելի մեծ է, քան ստացածներինը. սա այն պատճառով, որ մեր հայրենակիցների մի ստվար մասը գտնվում է Ռուսաստանում կամ արտերկրում, և նրանց անհրաժեշտ է, որ տվյալ երկրի քաղաքացիություն ունենան սովորելու, հարկեր մուծելու, բազմաթիվ այլ խնդիրներ լուծելու առումով», – վերջերս հրավիրած ասուլիսի ժամանակ տեղի ունեցող գործընթացն այսպես մեկնաբանեց փոխգնդապետ Ջաքարյանը: Ու այդքանից հետո ՀՀ ոստիկանության անձնագրերի ու վիզաների վարչության պետը եկել է այն եզրակացության, որ ՀՀ Սահմանադրությունից պետք է հանվի երկքաղաքացիությունը արգելող դրույթը: «Ես գտնում եմ, որ ճիշտ կլինի երկքաղաքացիություն ինստիտուտի գործելը: Ես պատասխանատու մարմին չեմ, ձեզ նման սովորական մարդ եմ, բայց պրակտիկ աշխատանքի ընթացքում եկել են այն եզրակացություն, որ ՀՀ քաղաքացիների համար ճիշտ կլինի, որ գործի երկքաղաքացիությունը: Սահմանադրական այդ արգելքը շատ է խոչընդոտում մեր երկրի սահմաններից դուրս գտնվող քաղաքացիներին թե՛ պաշտոն ստանալու հարցում, թե՛ բիզնեսը զարգացնելու խնդրում և այլն», – երկքաղաքացիության վերաբերյալ իր տեսակետն այսպես է հիմնավորում Ա. Ջաքարյանը: Նշենք նաև, որ ՀՀ քաղաքացիություն ստանալու համար անձը պետք է հազար դրամ պետությունը վճարի, իսկ քաղաքացիությունից հրաժարվելու դեպքում՝ 25 հազար դրամ:

Քրոջրվել, թե արդյոք ՀՀ և ԼՂՀ քաղաքացիությունը նույնն է: «Լեռնային Ղարաբաղում մասսայական ՀՀ քաղաքացիության անձնագրեր չեն տրվում: Բնականաբար, տրվում են ՀՀ քաղաքացու անձնագրեր մի որոշակի կատեգորիայի՝ երեխաներին, ովքեր դպրոցն ավարտել են, անձնագիր չեն ունեցել, պիտի ԲՈՒՀ դիմեն, ինչն առանց անձը հաստատող փաստաթղթի անհնար է: Եվ երկրորդը՝ պատերազմական գործողությունների հետևանքով շատ են վիրավոր ազատամարտիկները, որոնք բուժման նպատակով հովանավորների օգնությամբ մեկնում են արտերկիր: Եթե Լեռնային Ղարաբաղի մի պատահական քաղաքացի գա ու ինձ ասի՝ ՀՀ քաղաքացու անձնագիր տվեք, եթե նա ՀՀ-ում չի բնակվում, ՀՀ քաղաքացի չէ, չենք տալու: Բայց եթե իշխանությունները ինչ-որ նպատակի համար մարդուն գործուղում են որևէ երկիր, իսկ առանց անձնագրի նա որևէ երկրի սահման չի հատելու, բնականաբար, անձնագիր ստանալու համար չի դիմելու Ալին կրտսերին, ու մենք պիտի օգնենք մեր հայրենակիցներին: Իսկ ԼՂՀ օրենքը թույլ է տալիս երկքաղաքացիությունը», – բառացիորեն հայտարարեց նա: Այսինքն՝ Ալվինա Ջաքարյանի տրամաբանությամբ Ռոբերտ Քոչարյանը պատահական անձնավորություն չէր, ուստի և՛ 1998, և՛ 2003 թվականներին Ա. Ջաքարյանը նրան հանգիստ խղճով ՀՀ քաղաքացիության և մշտական բնակության մասին տեղեկանքներ է տվել՝ նրա հայաստանյան գործուղումը կազմակերպելու համար: «Որքանով է մե այսօր պաշտպանված մեր անձնագրերը» լրագրողի հարցին տվեց Ջաքարյանը պատասխանեց. «Կան մի շարք ուլտրամանուշակագույն պաշտպանիչ թելիկներ, որոնք անգնե աչքով չեն երևում, էջերը ջրանշանով են, իսկ 2000 թ. անձնագրերի նոր խմբաբանակի պատվիրման ընթացքում մի քանի անգամ բարձրացվել են պաշտպանման շերտերը: Այսօր Ֆրանսիան, Գերմանիան, Բելգիան և ԱՄՆ-ն անձնագրերի նոր տեսակ են ներդրել, որտեղ լուսանկարը ոչ թե փակցվում է, այլ թվայնացված տպվում է անձնագրում ու մուտքագրվում համակարգիչ: Մինչև 2006 թ. մեր անձնագրերը նույնպիսին կլինեն: 1995-2004 թթ. ՀՀ քաղաքացիության անձնագիր է ստացել 2 մլն 676 հազար 240 անձ:

Արման ԳԱԼՈՅԱՆ

ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ

«ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

Տպագրության է պատրաստվում «Աստվածաշնչական Հայաստան» ժողովածուն, որն իր մեջ կընդգրկի 1999 թվականին Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց դպրատանը կայացած համանուն գիտաժողովում ընթերցված գիտական զեկույցները: Դրանք թվով 100-ն են, որոնք նվիրված են Աստվածաշունչ-Հայաստան բազմաշերտ առնչությանը: Շուրջ 800 էջանոց գրքում զետեղված են նաև գումարի ներդրումներ և քարտեզներ: ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի խմբագրությամբ տպագրվող ժողովածուն, ըստ էության, Սբ Մեսրոպ Մաշտոց դպրատան ամենամեծ ներդրումն է հայագիտության մեջ:

ԿԱՆԱՅՔ ՇԱՏ ԵՆ

Ըստ Հայաստանի վիճակագրական տարեգրքի, 2004թ. հունվարի 1-ի դրությամբ, հանրապետության ընդհանուր բնակչության 51,8 տոկոսը կանայք են. 3 մլն 212,2 հազար բնակչությունից 1 մլն 546,7 հազարը տղամարդիկ են, իսկ 1 մլն 665,5 հազարը՝ կանայք: Հայաստանում գերակշռում են 65 և բարձր տարիքի (195,6 հազար) և 15-19 տարեկան կանայք (159 հազար): Որից հետո կանանց ընդհանուր թվում մեծամասնություն են կազմում 10-14 և 40-44 տարեկան իգական սեռի ներկայացուցիչները: Տղամարդկանց մոտ գերակշռում են համարյա նույն տարիքային խմբերը՝ 15-19, 10-14 և 20-24 տարեկանները, ապա՝ 40-44 և 65 տարեկանից բարձր: Հայաստանում կանանց կյանքի մոտավոր տևողությունը 75,8 տարի է, իսկ տղամարդկանց համար՝ 69,9 տարի:

ԿՈԼՈՐԱԴՈՆ ՃԱՆԱԶԵՑ

ԱՄՆ-ի Կոլորադո նահանգի խորհրդարանը միաձայն ընդունել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևը: Այժմ այդ երկրի 50 նահանգներից 37-ը ճանաչում է Հայոց ցեղասպանությունը:

ՍԱՀՄԱՆ

Ընթացիկ տարվա երեք ամիսների ընթացքում հայ սահմանապահների կողմից ձերբակալվել է ավելի քան 50 սահմանախախտ: Այդ մասին լրագրողների հետ զրույցում հայտնել է կառավարության առընթեր ԱԻՎ ծառայության սահմանապահ զորքերի հրամանատար, գնդապետ Վյաչեսլավ Ոսկանյանը: Ըստ նրա, սահմանի խախտման դեպքերը գրանցվել են հայկրացական սահմանում, ինչպես նաև Գյումրիի, Էրեբունու օդանավակայաններում ու երկաթուղային «Այրում» կայարանում: Գնդապետի խոսքերով, սահմանախախտները հիմնականում փորձել են կեղծ փաստաթղթերով անցնել սահմանը:

ԳՈՐԾԱԶՈՒԻԿՆԵՐԸ

Այս տարվա ապրիլի 1-ի դրությամբ, գործազրկության մակարդակը Հայաստանում 9 տոկոս է՝ տարեսկզբի 9,3 տոկոսի փոխարեն: Այս ցուցանիշը հանրապետական միջինից բարձր է Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզերում: Ապրիլի 1-ի դրությամբ, հանրապետությունում աշխատանք է փնտրել 138,3 հազար մարդ, ինչը 7,8 տոկոսով պակաս է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Աշխատանք փնտրողների 76,6 տոկոսը՝ 106 հազար մարդ, գործազուրկի կարգավիճակ է ստացել (նախորդ տարի՝ 118,4 հազար):

ԿՎԵՐԱԳԱՌՆԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Հասարակածային Գվինեայում բանտարկված հայ օդաչուները մինչև հունիսի 12-ը կվերադառնան հայրենիք:

ՈՒՂԻՂ ԱՎԻԱԶՎԵՐԹ

Թուրքիան համաձայնել է ուղիղ ավիաչվերթ բացել Անթալիայի և Երևանի միջև: Ըստ «Թրքիշ դեյլի նյուսի», դա կօգնի դյուրացնելու երկու հարևան երկրների միջև հարաբերությունները:

ԱՄԵՆԱՏԱՐՈՂՈՒՆԱԿ ՕԳՆԱՎԸ



Աշխարհում խոշորագույն «Ա-380» մարդատար ավիահանրանավը Ֆրանսիայում թռուչվելիս օդանավակայանից օդ է բարձրացել՝ կատարելով առաջին փորձարարական թռիչքը՝ օդում գտնվելով մոտ չորս ժամ: «Ա-380 Աերոբուսն» աշխարհում առաջին մարդուդային քաղաքացիական ինքնաթիռն է՝ ֆուլգեյաժի ողջ երկարությամբ երկու լիազափ տախտակամածներով: «A-380»-ում միաժամանակ կարող է տեղ զբաղեցնել 555 մարդ (վարձերթային տարբերակով՝ շուրջ 800 տեղ): Թռիչքի հեռավորությունը կազմում է մինչև 15 հազար կիլոմետր, ինչը թույլ կտա անվայրէջք թռիչքներ կատարել Եվրոպայի և Ասիայի միջև ընկած բոլոր երթուղիներով: Բեռնատար վերափոխակով «Ա-380F»-ը կկարողանա տեղափոխել 152 տոննա բեռ մինչև 10400 կիլոմետր հեռավորության վրա: Ինքնաթիռի ստեղծման ներդրումները կազմել են ավելի քան 10 միլիարդ եվրո: Երկհարկանի օդանավը եվրոպացի ավիաշինարարներին թույլ կտա ամրապնդվել ավիաշուկայում և ծանր հարված հասցնել ամերիկացի իրենց գործընկերներին: Վեց օդաչուներից բաղկացած անձնակազմը տարաբնույթ տեղեկություններ է հաղորդել, որոնք կօգտագործվեն առկա թերությունները շտկելու և կանոնավոր թռիչքներին նախապատրաստվելու համար: 73 մետր երկարությամբ օդանավի առաջին թռիչքին հետևել է մոտ հիսուն հազար հանդիսատես: Նշենք նաև, որ «A-380»-ի թևերի բացվածքը 79,8 մետր է, իսկ բարձրությունը՝ 24,1 մետր: Օդանավն անհրաժեշտության դեպքում կարող է զարգացնել 900 կմ/ժ արագություն:

ԶՈՎԱՑՈՒՑԻՉ ԸՄՊԵԼԻՔ

Պարզվում է՝ կարտոֆիլը ոչ միայն կարելի է ուտել, այլ նաև խմել: Դրանում համոզված են Բելառուսի գիտահետազոտական ինստիտուտի, սննդամթերքների նախագծային բաժնի մասնագետները: Նրանք ստեղծել են աշխարհում նախադեպը չունեցող կարտոֆիլից զովագուցիչ ըմպելիքի բաղադրատոմս: Առաջին հայացքից այն նման է կվասի, շատ համեղ է, օժտված բուժիչ հատկություններով:

Ինստիտուտում աշխատում են կարտոֆիլից ըմպելիքների մի ամբողջ գամնայի ստեղծման ուղղությամբ:

Պաշտոնական վիճակագրության համաձայն, այս տարվա առաջին եռամսյակում Հայաստանում ծնվել է 8 հազ. 942 երեխա, անցած տարվա 8 հազ. 947-ի դիմաց:

ԱՄԵՆԱՄԵԾԱԹԻՎ ԽԱՎԸ

Խարդախները մեր կյանքում

Մի տեսակ աննկատելիորեն ամենամեծաթիվ խավը հայոց աշխարհում դարձան խարդախները: Այսօր նրանք բազմացել են աներևակայելի քանակությամբ: Խարդախներ, իհարկե, կան ամենուր, և միշտ էլ նրանք եղել են ու կլինեն: Սակայն խելամիտ հարաբերակցությամբ: Ասենք, մեկ խարդախ՝ հազար ոչ խարդախին: Իսկ մեզանում խարդախներն այն աստիճան են շատացել, որ դրանցից տեղ ու դադար չկա: Կանգնած են ամեն քայլափոխի հրապուրիչ առաջարկներով և, բարյացակամ ժպտալով, երդվում են փրկել, լուծել բոլոր խնդիրները, փող տալ, կերակրել, տաքացնել ու էլի սատանան գիտի, թե ինչ: Հանդիպում ես իր գործն ազնվորեն անող մարդու և զարմանում: Մի՞թե նա իսկապես պրոֆեսիոնալ է, որը ջանում է լավագույն կերպով կատարել սեփական աշխատանքը՝ խաբելու և ինձանից հնարավորինս շատ փող պոկելու փոխարեն: Դե ո՞չ, չի՞ կարող պատահել: Երբեք չգիտես, թե ինչ ես գնում: Ձեռք բերելով հանքային ջրով շիշը, չի կարելի վստահ լինել, որ դա սովորական ծորակի ջուրը չէ: Իբր անարտու կաթը պատրաստվում է փոշուց, այստեղ կասկած անգամ չկա: Իսկ այ ինչի՞ց է պատրաստվում փոշին: Սուրճ, սիգարետ, մսամթերք, ոգելից խմիչք, հազուստ, դեղորայք, պահեստամասեր, վերանորոգում... Ցուցակն այս կարելի է շարունակել անվերջ: Խարդախներն այնքան շատ են, գործում են այնպիսի եռանդով, որ սովորում են իրական արտադրողներին: Արդյունքում սկսում է թվալ, թե արդեն չի մնացել անուր հողի և ոչ մի կոզյակ: Շուրջբոլորը ճահիճ է: Խարդախներ են անխտիր բոլորը: Ձգտում ես ոչ մեկին չհավատալ: Բժշկի խորհուրդները վերստուգում ես երեք ուրիշ բժիշկների մոտ, այլապես կսկսես բուժել նրանից, ինչով բնավ հիվանդ չես: Կեղծիքն իրենց մասնագիտությունը դարձրած մարդիկ այսօր ծով են: Մեծ մասամբ բարետես արտաքին ունեն, զբաղեցնում են պատվաբեր պաշտոններ ու քանկարծեք դրամապանակներից համում շքեղ այցեքարտեր: Նրանք եռանդուն են, քաղաքավարի, արագ կողմնորոշվում են ու «եռում աշխատանքի մեջ»: Թե կուզեք իմանալ, նրանք շատ ավելի են մնան պարկեշտ մարդկանց, քան իսկապես պարկեշտ մարդիկ, որոնք չունեն ոչ շքեղ այցեքարտեր, ոչ քանկարծեք դրամապանակներ: Պարկեշտ մարդիկ իրենց մեծամասնությամբ հակառակը. թողնում են ոչ այնքան հաճելի տպավորություն: Վարսավիրանոց նրանք հազվադեպ են այցելում, հազուստը գնում են ամենաէթանագին տեղերից ու մշտապես ինչ-որ հիվանդությամբ տառապում: Նրանք նեղացկոտ են, հոգնած ու նյարդային: Ատում են խարդախներին, թեև իրենք էլ՝ անկեղծորեն երագում են ինչ-որ խարդախություն անել: Երբեմն դա

նրանց իսկապես հաջողվում է: Սակայն այդ մարդկանց խարդախություններն ավելի շուտ հիշեցնում են մանր ժուլիկություն ու կրում միանգամայն բնույթ: Ավելիքն ամելու համար նրանց պակասում է ցինիզմը: Մանր խարդախները հիմնարկում են առանձին քաղաքացիների: Ավելի խոշոր խարդախները՝ մոլորեցնում սոցիալական խմբերի: Բայց ամենաբարձր վարպետություն ցուցաբերում են նրանք, ում հաջողվում է մատնելի վրա խաղացնել միանգամից ողջ հասարակությանը: Պետությունն ախր նույնպես զբաղվում է խարդախությամբ: Ըստ որում պետության ձեռքին կա դրա համար անհրաժեշտ ամեն ինչ. հեռուստատեսություն, ցանկացած համազգեստով մարդիկ, տարբեր լծակներ: Հասարակության բարոյալքությունը սկսվում է այն ժամանակ, երբ խաբելը դառնում է բնավ ոչ ամոթալի: Երբ մարդիկ հասկանում են, որ սուտն ու կեղծիքը սովորական երևույթ են: Քաղաքական գործիչները, պատգամավորները, կառավարությունը. նրանք բոլորը խաբում են: Խոստանում մի բան, անում մեկ այլ բան, ստացվում է երրորդը: Եթե նրանց կարելի է, ապա ինչո՞ւ չի կարելի մեզ: Բարոյականությամբ չսանձահարվող խարդախությունը արագ ձեռք է բերում կենցաղային բնույթ: Բոլոր արգելքները վերացված են: Կարելի է թունավորել մարդկանց, թալանել որբերին, խլել վերջին գրոշները ծերունիներից: Ամեն ինչ կարելի է: Ազնվությունը, խղճահարությունը, գթասրտությունը, կարեկցանքը, ամոթը. դա մարդկանց համար է: Իսկ մեզանում տիրում է ջունգլիների օրենքը: Այդպես էլ գլորվում ենք ներքև: Խնդիրը միայն այն է, թե ինչպես ենք գլորվում: Ոմանք դադարում են մաքրել ատամներն ու հանգցնում սիգարետի ծխուկները սեփական ներքնակի վրա: Մյուսները պարզապես խմում են մինչև նախաճաշ: Երրորդները՝ վարձով տալիս ծնողների բնակարանն ու սերտաճում բազմոցին, արվարձանում ինչ-որ տեղ: Չորրորդներն առանձնատներ են կառուցում և ողորմություն չեն տալիս աղքատներին, քանզի չեն տեսնում նրանց՝ լիմուզինների մթնեցված ապակիների հետևից: Հինգերորդները շարունակ հեռուստացույց են դիտում՝ մերթընդմեք բացականչելով. «Ա՛յ քեզ տականքներ»: Վեցերորդները՝ դառնում չորրորդների ծառան: Յոթերորդները վերնաշապիկն են պատառոտում հանրահավաքներում: Ութերորդները՝ հեռանում երկրից: Այս ամենը անկման ճանապարհ է, քանզի վերելքի ուղին մեկն է. ազատ և ազնիվ աշխատանք՝ ի բարօրություն սեփական հայրենիքի: Բայց դա, ցավոք, անհնար է: Քանզի հայրենիքին մեր ազատ ու ազնիվ աշխատանքը բացարձակապես պետք չէ:

Վարդան ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԳԼԵՆՂԵՅԼԸ ՄԵՐՆ Է

Առաջիկա երեք տարվա ընթացքում Գլենդեյլի քաղաքային խորհրդում հայերը կունենան մեծամասնություն: Այստեղ կայացած ընտրությունների նախնական ոչ պաշտոնական արդյունքները վկայում են, որ խորհրդի անդամակցությանը հավակնող 19 թեկնածուներից ամենաշատ ձայն ստացել է Արա Նաջարյանը: Նրա օգտին քվեարկել է ընտրողների ավելի քան 10 տոկոսը: Ապա 9 տոկոս ցուցանիշով հետևում է գործող քաղաքապետ Բոբ Ցուսեֆյանը: Հինգ հոգուց բաղկացած քաղաքային խորհրդում կա ևս մեկ հայ՝ Րաֆֆի Մանուկյանը: Բայց այդ, վերջին 75 տարվա ընթացքում առաջին անգամ ընտրվում էր նաև քաղաքապետարանի գործավար. այդ պաշտոնում ընտրվել է Արտաշես Քացախյանը: Հի կարելի ասել, թե կատարվածը անակնկալ է, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ Լոս Անջելեսի տարածքում բնակվող 153 հազար ամերիկահայերի ավելի քան մեկ երրորդը ապրում է հենց Գլենդեյլում: ԱՄՆ-ում չկա մի քաղաք, ուր հայերն ավելի շատ են, և ընդհանրապես 205 հազար բնակիչ ունեցող Գլենդեյլում հայերը 2-րդ խոշոր ազգային խումբն են:

Մեծ հաշվով մի արտառոց բան չկա, որ այս հայաշատ քաղաքում ընտրություններում հաղթանակ են տարել հայերը: Այլ խնդիր է, որ մեզ՝ ՀՀ քաղաքացի հայերիս համար սա ուղղակի սենսացիա է: Քանի որ մեր Յոյաստանում երբեք չի գրանցվել այնպիսի դեպք, որ, ասենք, Ռեյական ընտրություններից հաղթանակ տանեն գոնե առանձին վերցրած մի գյուղի համակրանքը վայելող թեկնածուները և ոչ թե իշխանության դրածոները:

Գլենդեյլում՝ հայերից բացի, իրենց թույլ են տալիս բնակվել նաև այլ ազգությունների ներկայացուցիչ ամերիկացիներ: Բայց դրանք պարտվեցին: Այն էլ՝ հայերին, որոնք ԱՄՆ նախագահական վերջին ընտրություններին պաշտպանել են ոչ թե հանրապետական Բուշին, այլ դեմոկրատ Քերրիին, քանզի որ վերջինս առավել շռայլ խոստումներ էր տալիս Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման վերաբերյալ: Այսինքն՝ հայերը, կարելի է ասել, Բուշի ներկայիս վարչակարգին «ընդդիմադիր են», սակայն կրկնում ենք՝ այնուամենայնիվ, հաղթեցին:

Ինչ խոսք, հաճելի է, որ հայերը հաղթանակ տարան մեկ առանձին վերցրած քաղաքում, սակայն մեզ՝ հայաստանցիներին համար այս հանգամանքը փոքր-ինչ վիրավորական է: Մի՞թե անպայման պետք է արտազանք, որպեսզի լինելով ազգային ներքամասնություն և ընդդիմություն՝ կարողանա քո ընտրյալ վերկայացուցիչներին ուղարկել թող որ քաղաքային կառավարման մարմին: Մի՞թե անպայման պետք է քո պատմական հայրենիքից հնարավորինս հեռու գտնվես, որ կարողանաս քաղաքական կարիերա անել, ընդ որում՝ ոչ թե վարչախմբին ծառայելով, այլ հակառակը՝ համալրելով այդ վարչախմբին ընդդիմացողների շարքերը:

Այդպես էլ անպատասխան մնաց հետևյալը. ինչո՞ւ ենք մենք՝ հայերս, օրինապաշտ միայն ուրիշի հողի վրա: Մեր արտասահմանցի հայրենակիցների հնարավորությունները շատ ավելի մեծ են, քան սեփական պետությունում, ուր շատ ավելի հեշտ է կեղծելն ու խաբելը, հատկապես ընտրությունների ժամանակ: Չենք ուզում եզրակացնել, թե մենք դեռևս արժանի չենք սեփական պետություն ունենալու: Բայց հակառակն էլ առայժմ չի ապացուցվել:

ԱԼԵՔՍԵՅ ՀԵՔԻՄՅԱՆԸ ՂԱՐԱՔԱՂՈՒՄ

Լուրը միանգամից թևածեց ամենուր. կոմպոզիտոր Ալեքսեյ Չեքիմյանն է հյուրընկալվում Ղարաբաղում:

1981-ի սեպտեմբերյան առաջին օրերի դեռևս ջերմ ու ամառ-նաբույր շունչն էր իշխում: Արցախ աշխարհը զուգահեռ մեջ էր: Ոսկեզույնով զուգված բերքառատ վաղ աշունը դրեւել էր իր պչրանքների ողջ գույները, որոնք հրակարմիր արևի շողերից զմայլանքի գգվիչ կախարհանքներ էին ծնում օդում:

Ղարաբաղցին ամբարում էր իր արդար ձեռքերով արարած լիառատ բերքը, շտեմարաններն էին լցվում արցախյան աշխարհի ոսկեզույն ցորենն ու արփի շողերից շիկնած խաղողը: Այգիներում նախազարդ հարսների մման իրենց ամոթխած գլուխներն էին հակել բերքից ծանրացած խնձորենին ու տանձենին, ալ ու ալվան հագած նռենին, մեղրածոր թուզը... Թվում է, ամբողջ Ղարաբաղն էր պչրվել՝ դուր գալու իր երգահան զավակին...

Անդրանիկ հանդիպումը Ստեփանակերտի հայկական պետական դրամատիկական թատրոնի մոտ չորսհարյուր մատատեղ ունեցող դահլիճում էր: Այն սկսվելուց մեկ ժամ առաջ արդեն լեփ-լեցուն էր և նոր եկողները ճգնում էին թատրոնի տնօրենի առանձնատեսչակից ու վարչական մյուս աշխատատեսչակներից աթոռներ հայթայթել՝ տեղավորվելու դահլիճի շարքերի միջև դեռևս չզբաղեցված անցուղիներում: Ջուր էին թատրոնի սպասարկող անձնակազմի ճղճղան կանանց հորդորները, որոնք քիչ անց վերածվեցին բարձրածայն պահանջների՝ անխտիր ազատել բոլոր անցուղիները: Ոչ-ոք չէր ցանկանում դժվարությամբ գրաված, թող որ անօրեն, նստատեղից ոյուրությամբ ձեռքաշել:

Հաջողվեց երկու ազատ տեղ գտնել կնոջ և ավագ որդու համար: Նրանց տեղավորելուց հետո շվար կանգնած, ապա անհույս հայացքով դահլիճում որևէ տեղ էի դարձյալ փնտրում ինքս նույնպես տեղավորվելու: Նպատակով, երբ հետևի շարքերից կանացի մի հաճելի ծայն լսվեց.

- Սերգեյ: Սերգեյ ջան, ինձ մոտ ազատ նստատեղ կա, համեցի՞ր: Թատրոնի առաջատար դերասանուհիներից մեկն էր, հանրապետության ժողովրդական արտիստուհի Մարգո Բալասանյանը:

Երեկոյի սկզբից Չեքիմյան-երգահանի մասին խոսք կարդաց կոմպոզիտորների միության Լեռնային Ղարաբաղի մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղար Էդուարդ Ղազարյանը:

Բեմ է բարձրանում Չեքիմյանը. գեղեցիկ է, վայելուչ հագնված ու ամրակազմ: Միլիցիայի զեներալ է եղել, ուզես-չուզես պիտի ուժեղ լինես ու ամրակազմ, մտածեցի ու միտքս շնչացի տիկին Մարգոյի ականջին: «Գեղեցիկ տղամարդ է», - ասաց, առանց հայացքը բեմից կտրելու: Ժողովուրդը մոռանալու աստիճան երկար ու ոգևորությամբ ծափողջույն է հղում նրան: Չեքիմյանը լիաբուն ժպտում է, շարունակ խոնարհունով իր շնորհակալությունը արտահայտում ժողովրդին: Այս ծափողջույնը շուտ էի դադարի, դիտելով շուրջ բոլորս արթունքի մի անհիմնալի խիճ-դով ողողված մարդկանց դեմքերը, մտածեցի ես: Ի՞նչ պիտի անի Չեքիմյանը: Միլիցիոներ է, հնարը կգտնի, առկայծեց իմ ուղեղում: Իրո՞ք: Աջով մի հատու շարժում նկարելով օդում, կոմպոզիտորը մոտեցավ միկրոֆոնին և պատրաստվեց խոսելու: Ծափողջույնները մեկն ընդհատվեցին: Ոմանք, որ նրան ավելի լավ տեսնելու համար բարձրացել էին նստատեղերից, կրկին տեղավորվեցին ու դահլիճում ցանկալի սպասողական լռություն տիրեց:

Հիմա Չեքիմյանը կարող էր խոսել: Նայեցի առջևի երկու շարքերին տեղավորված կուսակցության մարզային կոմիտեի աշխատակազմի պաշտոնյաներին: Սրանք էլ լուռ էին ու շրջապատին անհաղորդ:

Օդում թավշյա մի հաճելի ծայն թևածեց.
- Թանկագին բարեկամներ: Ռուսերեն խոսեց, ապա մի հայացքով ամբողջ դահլիճը ընդգրկելով, շարունակեց: - Այսօր իմ հոգու համար ազգային տոն է՝ հանդիպում իմ սիրելի Ղարաբաղի ու Ղարաբաղցիների հետ: Ես անչափ զգացված եմ ձեր ջերմ ու դարավար ընդունելությունից: Մտածեց մի պահ, ավիվ արդեն ճերմակազույնը հարթած գլխի մազերը շփեց ու, հոգոցի պես մի ծայն գոռով իր մեջ խեղդելուց հետո շարունակեց: - Ղարաբաղը իմ ծննդավայրն է, և ես որդիական սիրով ու երախտագիտա-

կան զգացումով ուզում եմ իմ սերը նրան արտահայտել երգով ու նվագով...

Բարվոք չափով ու վարժ տիրապետում էր դաշնամուրին: Մոտեցավ բեմահարթակում տեղադրված նվագարանին, մի շարժումով նստեց թիկնաթոռին և նույնքան էլ արագ մատերը շարժեց ստեղներով: Մինչ ինքը իր իսկ նախանվագից հետո պատրաստվում էր ձայնակցելու, դահլիճն արդեն երգում էր վարար ու միասնական: Երգվող առաջին քառատողը ավարտելուն պես սահուն անցավ հաջորդ իր երգին: Բայց այստեղ էլ դահլիճը միասնական էր: Երրորդ փորձեց, կրկնվեց նույնը: Այսպես յոթ-ութ երգ, յուրաքանչյուրից մեկական քառատող: Ներքին բերկրանք կար դեմքին, որը ողողված էր երջանիկ ու անբաքույց հպարտությամբ: Հպարտ էր այն իրողությունից, որ հեռու Ղարաբաղում սիրում ու երգում են իր երգերը, որ դրանք ժողովրդի սեփականությունն են դարձել, որ այդ երգերով ժողովուրդը իր սերն ու հարգանքն է արտահայտում սիրված երգահանի ու նրա ստեղծագործությունների հանդեպ: Ուրեմն դրանք անհրաժեշտ են և օգնում են ապրելու Ղարաբաղում: Չեքիմյանական երգերը մարդկանց կյանքի, նրանց կենցաղի մի հաճելի ու անքակտելի բաժինն են կազմում:

Դահլիճն ու բեմը վերածվեցին ամբողջական մի միասնության: Վարագույրի անտես շղարշի զգացումը չկար և կոմպոզիտորը լիովին մերձեցավ դահլիճին...

Երաժշտակատարողական պետական երկու խմբերի՝ ԼՂԻՄ հայկական երգի-պարի ու «Ղարաբաղ» վոկալ-գործիքային անսամբլների առաջատար երգիչների կատարմամբ հնչեցին երգահանի մեկ տասնյակի չափ երգերը: Վաստակավոր արտիստուհի Էլմիրա Առստամյանը երգեց, նրան հաջորդեց հանրապետության ժողովրդական արտիստուհի Նաիրուհի Ալավերդյանը, կոլեկտիվների առաջատար այլ երգիչներ:

Արտակարգ հուզականությամբ շնչող ու միաժամանակ ողբերգական արարումների, մեղության ու անձեռնադատության դալուկ նրբերանգներ կային Նաիրուհի Ալավերդյանի կատարումներում: Ղարաբաղի ճանաչված երգչուհին քսան օր առաջ էր հողին հանձնել իր տասնհինգամյա դատրիկին, որի անակնկալ ու ողբերգական վախճանը ցնցել էր մարդկանց, երգչուհուն ճանաչողներին ու արվեստի նրա երկրպագուներին: Դեռևս երգահանի հետ հանդիպումից առաջ դահլիճում շատերն էին վիճարկում. երգչուհին նման հոգեկան խորը ցնցումից հետո կհամաձայնի՞ ու ի վիճակի կլինի՞ բեմ դուրս գալու: Միաժամանակ ոմանք գտնում էին, որ սիրված կոմպոզիտորի ու նրա արվեստի հանդեպ ունեցած անմեկն սերը երգչուհուն կօգնեն ամոքելու իր ցավը և բարձրանալու համերգահարթակ:

Նաիրուհին երգեց այդ հանդիպմանը: Կատարված չորս երգերից երկուսը հիքիմյանական էին. «Բարի արագիլ» և «Այգեպան»: Հենց ավարտեց, ունկնդիրների երախտագիտությամբ ու սիրովանքով օծված մի անտեսանելի զգացումի և ծափերի նվագակցության տակ Չեքիմյանը բեմ բարձրացավ, շնորհակալություն հայտնեց երգչուհուն և արագ դուրս գնաց բեմից...

Համերգի հաջորդ կատարումներին ես անհաղորդ մնացի: Դահլիճի խավարի մեջ ինձ գտավ հանրապետական թերթերից մեկի լուսանկարիչը ու փութով դուրս հրավիրեց:

- Չեքիմյա նն է ուզում քեզ տեսնել..., - հասցրեց հուշել ուղեկիցս:
- Ի՞նչ գիտե ինձ Չեքիմյանը, - զարմացած հարցրի:
- Նրան քո մասին քաղկոմի քարտուղարն է հայտնել:

Թատրոնի ճեմաարահուն կոմպոզիտորը գրուցում էր կուսակցության քաղաքային կոմիտեի քարտուղարի հետ: Մոտեցանք, ես ողջունեցի:

- Մեր Ղարաբաղի երաժշտագետն է, Սերգեյ Մարկոսյանը, - ինձ ներկայացրեց Չեքիմյանի գրուցակիցը:
- Ուրախ եմ, - իր սովորական ռուսերենով խոսեց, սեղմեց աջ ու միանգամից անցավ գործնական գրույցի, - մենք վաղը երաժշտական ուսումնարանում հանդիպում ունենք: Հայտնեք այնտեղ, թող ժամանակին կարգի բերեն դահլիճը: Ես սիրում եմ նշանակված ժամին ներկայանալ. խա էլ ձեզ մոտ հայտնեք...

Հաջորդ օրը, սակայն, ես գրկված էի ավելի մոտից հայրենակից կոմպոզիտորին տեսնելու ու ճանաչելու փայփայած հաճույքից: Կեսօրին, երբ նա նույն Էդուարդ Ղազարյանցի ուղեկցությամբ ուսանողների և դասատուների ծափողջույնների ու բուն բա-

ցականչությունների ներքո մտավ դահլիճ, նույն պահին էլ ինձ անակնկալ հեռախոսի մոտ կանչեցին: Միջբաղաբային զանգ էր, Բաքվի հայատառ «Կոմունիստ» թերթից: Չանգուն էր կուլտուրայի և գրականության բաժնի խմբագիր Էմմա Պետրոսյանը:

- Սերգեյ, բարի օր: Անհապաղ ծավալուն նյութ է անհրաժեշտ Ալեքսեյ Չեքիմյանի դարաբաղյան հանդիպումների և, առանձնապես պետքատրոնի դահլիճում երեկ կայացած երեկոյի վերաբերյալ: Նյութը այսօր պետք է տպարան մտնի՝ շարվելու...

Կյանքում առաջին անգամ հեռախոսով հանպատրաստի նյութ թելադրեցի. գոռալով հեռախոսի մեջ (վատ էր լսվում), կոմպոզիտորի երգերի հեղինակային նվագակցության տակ (դահլիճում հանդիպումն էր շարունակվում), անտրամադիր, որ զրկվեցի երգահանին մեկ անգամ ևս տեսնելու-ունկնդրելու հնարավորությունից:

Հուշի միայն մի ծվեն է մնացել այդ հանդիպումից: Հեռախոսով նյութի թելադրումը վերջացրել և խռպոտած ձայնով միջանցք էի ելնում, երբ դահլիճից դուրս եկավ Չեքիմյանը: Դռան մոտ կանգնած էր ուսումնարանի խարտյաշ մագերով երիտասարդ ուսուցչուհիներից մեկը: Հանդիպումն ավարտվել էր ու ներսում գտնվողները կոմպոզիտորի հետևից դուրս էին գալիս դահլիճից: Չեքիմյանը խորամանկ մի հայացք նետեց աղջկան, ինձ նկատեց, աչքով արեց ու մոտեցավ աղջկան.

- Ինչպե՞ս է քո անունը:
- Տատյանա, - շփոթվեց, սակայն հասցրեց պատասխանել խարտյաշը:
- Ռու՞ս ես, - հայերեն էր խոսում: Խոսելաձևն էլ դարաբաղյանն էր:
- Կիսով չափ: Մայրս հայուհի է...
- Դե ասա ինձ պես խառնուրդ ես, է՛լի, - եզրահանգման եկավ երգահանը...

Մի ամբողջ ամիս հայրենակից արվեստագետը շրջում էր Ղարաբաղում, հիանում նրա բնությանը ու աշխատասեր մարդկանցով, հանդիպումներ ունենում մարզկենտրոնի ու շրջկենտրոնների, գյուղի աշխատավորության հետ: Կոմպոզիտորը իր երգերի մունետիկը հանդիսացավ լեռնական այս աշխարհում: Նրա երգերի թովիչ մեղեդիները գրավում էին բազմահազար ունկնդիրներին իրենց թարմությամբ, ժողովրդի նվիրական ապրումների, զգացմունքների հետ երկխոսելու անմիջականությամբ, մեղեդու բնականոն հոսունությամբ:

Ղարաբաղում Ալեքսեյ Չեքիմյանը ծանոթացավ տասնյակ մարդկանց հետ, սիրեց նրանց: Մարզի հնավանդ, դարերի կենսագրություն ունեցող Ավետարանոց գյուղի աշակերտության և աշխատավորների հետ ջերմ, անմոռանալի հանդիպումից հետո շշմջաց հանդիպմանը եկած Ստեփան Շահունյանի թոռ Ստեփան Լևոնի Շահունյանի ակամաջին.

- Երնե՛կ նորից ծնվելի նախնիներին հողում: Այս ժողովրդին մահ չունի: Տե՛ս ինչպես է վիճում դարերի հետ... Ե՛րբ կգամ մեկեն աշխարհն այս կուսական:

Ալեքսեյ Չեքիմյանը նորեն Ղարաբաղ գալ չկարողացավ: Նախախնամությունը այլ ճակատագիր էր տնօրինել նրա համար: Իր հայրենակիցներից բաժանվելու երկու տարին դեռ չէր բուրդել, երբ թերթերը զուժեցին նրա մահը:

Սակայն արվեստագետը հասցրեց Ղարաբաղին ու նրա մարդկանց ստեղծագործ աշխատանքին ձոնված երգերի շարքը ավարտել, որի առաջին կատարողը հանդիսացավ կոմպոզիտորի սիրված հայրդի երգիչներից հանրապետության ժողովրդական արտիստ Ռուբեն Մաթևոսյանը:

Չեքիմյանը բարի ու լուսավոր հիշողություններ թողեց իր հայրենակիցների հոգում: Ղարաբաղյան շրջագայությունը, որ մի յուրովի ստեղծագործական հաշվետվություն էր հարազատ ժողովրդին, անմոռաց հուշեր տվեց արվեստագետին:

Ղարաբաղը սիրեց իր գավալկին, սիրեց նրա արվեստը, նրա անզուգական, ժողովրդաստեղծ երգերը: Եվ այդ սերը փոխադարձ էր ու անշահախնդիր, երկուստեք համեմված սիրո ու գարունքվա մի անբացատրելի, ցողաթաթախ բույրով...

Այդպես էլ մնաց Ալեքսեյ Չեքիմյանը Ղարաբաղցիներիս հիշողության մեջ. սիրված ու գարունքված, ցողաթաթախ բույրով ու լույսով...

Սերգեյ ՍԱՐԿՈՍՅԱՆ

«Խոսում են» քարերը



Ավավերդի քաղաքի տարեգրության մեջ մնայուն հետք է թողել բազմաշնորհ լուսանկարիչ Սեյրան Տիտանյանը, որի աշխատանքներում զգալի տեղ են գրավում Լոռի աշխարհի ժայռերին դրոշմված մարդկային պատկերները: Հեղինակը դրանց անուններ է շնորհել (նկարում «Ձուլողը»):

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԸ

Երկարակեցության վերաբերյալ իր վարկածն է առաջադրել անգլիացի պրոֆեսոր Մայքլ Մարմոտը: Ըստ գիտնականի, ճիշտ սննդակարգի, որակյալ բժշկական ծառայության և վնասակար սովորությունների բացակայության հետ մեկտեղ, պարզվում է, պակաս կարևոր չեն նաև կյանքում ձեռք բերված հաջողությունները:

Դեռ 60-ականներին Մարմոտը հանգել էր այն եզրակացության, որ որքան մեծ են մարդու ձեռքբերումները, այնքան մարդն առողջ է: Եվ ահա 30 տարի անց գիտնականն անցկացրել է համանման գիտափորձ տարբեր երկրներում, ամենատարբեր մասնագիտությունների տեր մարդկանց շրջանում:

Արդյունքներն ամենուրեք նույնն են. այն մարդիկ, ովքեր հասել են սոցիալական բուրգի գագաթին, ավելի երկարակյաց են: Հետաքրքրականն այն է, որ մարդու նյութական հարստությունն ու եկամտի չափը կյանքի տևողության վրա ազդեցություն չունեն: Ըստ դիտարկումների, դոկտորի և մագիստրոսի գիտական աստիճաններ ունեցողները, որպես կանոն, ավելի երկար են ապրում, քան գիտական աստիճան չունեցող դիպլոմավորները: Վերջիններս էլ, իրենց հերթին, ավելի երկարակյաց են, քան միջնակարգ կրթություն ստացածները:

Պարզվել է նաև, որ հոլիվուդյան դերասանների շրջանում ավելի երկարակյաց են օսկարակիրները, իսկ հաջողակ քաղաքագետների երկարակեցության մասին շատերը գիտեն. Ուիլյամ Չերչիլը, Կոնրադ Լիբենաուերը, Դեն Սյաոպինը և ԱՄՆ Ոսխազահների մեծ մասը երկարակյացներ են, թեև նրանք անխռով կյանքով չեն ապրել:

Ներկայացրեց Լևոն ԳՐԱՂԵԱՆԸ



Կենսագրական ակնարկ

Վասպուրակ Պողոսյան - «Տաշիր» առևտրաարդյունաբերական միավորման փոխնախագահ: Ծնվել է 1968 թ. Հայաստանի Հանրապետության Տաշիրի (նախկին Կալինինո) շրջանի Սարչապետ գյուղում: Ավարտել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտը: Այժմ սովորում է Մոսկվայի Նոր Իրավաբանական ինստիտուտի ավարտական կուրսում:

Ամուսնացած է, ունի երեք երեխա: Այս հակիրճ կենսագրական ակնարկով, ինչ խոսք, անհնար է ամբողջովին բնութագրել Վասպուրակ Պողոսյան մարդուն և գործչին, ուստի մեր կողմից ընտրված հարցազրույցի տարբերակը, կարծում են, մեր զրուցակցի դիմանկարն ամբողջական ներկայացնելու լավագույն եղանակը կարող է լինել:

Մարդուն լավագույնս կարող է բնութագրել հենց ինքը՝ տվյալ անհատը՝ իր կատարած գործերով և, իհարկե, մարդիկ, որոնք ճանաչում են նրան ու այս կամ այն գործի հանգամանքով շփվում նրա հետ: Եվ հատկանշանական է այստեղ մի հանգամանք. բոլոր մտերիմներն ու ճանաչողները բնութագրում են Վասպուրակ Պողոսյանին երկու հիմնական հասկացողություններով՝ սառը հաշվարկ և տաք սիրտ:

Մառը հաշվարկ և տաք սիրտ

- Սկսենք երևի այստեղից՝ սառը հաշվարկ և տաք սիրտ: Դժվար է դրանք համատեղել:

- Երևի ամենադժվարը: Եթե սառը հաշվարկն ու սառը դատողությունը չլինեին իմ աշխատանքի բնութագրիչները, ապա դժվար թե ես այսօր այստեղ լինեի: Իսկ ինչ վերբերում է «տաք սրտին»՝ ես պարզապես ուրախ եմ, որ ինձ նաև այդպես են բնութագրում:

- Ինչի՞ց է սկսվում ձեր աշխատանքային օրը:

- Դեռևս վաղ առավոտյան, հենց նախաճաշի սեղանի մոտ արդեն մտնում եմ օրվա գործերի շուրջ: Հետաքրքրի է, որ շատ հաճախ լավագույն լուծումներն այդ պահերին են գտնում: Գործի հետագա ընթացքը օրն ինքն է որոշում:

- Ձեր և առհասարակ կազմակերպության պատասխանատու աշխատողների հատկանշական կողմերից մեկն էլ մարդկանց լսել կարողանալու կարողությունն է:

- Դա աշխատանքային ոճ է, որը մեզ է փոխանցվել մեր կազմակերպության նախագահ Սամվել Կարապետյանից: Մարդկանց լսելու և հասկանալու հատկանշական կողմն էլ հենց իմ կարծիքով մեր հաջողության պայմաններից մեկն է:

- «Տաշիրի» ամենապատասխանատու՝ ֆինանսները բաշխելու և վերահսկելու աշխատանքից բացի դուք ինչ-որ տեղ կատարում եք նաև աշխատակազմի ղեկավարի պարտականությունները՝ կադրերի ընտրություն և վերահսկողություն նրանց աշխատանքի նկատմամբ: Հետաքրքիր է իմանալ՝ ինչպե՞ս եք ընտրում կադրերին:

- Տարօրինակ կթվա, եթե ասեմ, որ կադրի մասնագիտական կարողություններից ու ընդունակությունից առաջնահերթը ինձ համար նրա զուտ մարդկային, բարոյական արժանիքներն են: Վերջ ի վերջո փաստ է, որ ամեն մարդ էլ լավագույնս թրծվում ու կրթվում է աշխատանքային գործընթացում, որտեղ փորձարկման են ենթարկվում նաև ուսման տարիներին ձեռք բերված տեսական գիտելիքներն ու կարողությունները: Իսկ ներքին, մարդկային արժանիքները, ցավոք, դժվարությամբ են ձեռք բերվում, այն էլ հիմնականում հենց շաղախով, ինչպես ասում են՝ մոր կաթի հետ է փոխանցվում նրան:

- Իսկ ի՞նչ նշանակություն ունի ձեզ համար ընկերության գաղափարը աշխատանքային հարաբերություններում:

- Հետաքրքիր հարց է, իհարկե, քանի որ կազմակերպության պատասխանատու աշխատողներից շատերը նաև իմ ընկերներն են: Դա, ինչ-խոսք, ստեղծում է բավականին դժվարին հոգեբանական մթնոլորտ աշխատանքային հարաբերություններում: Դժվարությունը նրանում է, որ և՛ ես, և՛, հավատացած եմ՝ ինձ հետ աշխատանքային թուխրոհի մեջ գտնվող իմ բոլոր ընկերները պիտի կարողանանք ճիշտ հարաբերել կազմակերպության շահերն ու ընկերական փոխհարաբերությունները: Հավատացած եմ, որ իմ մտերիմներն այնքան բարձր են գնահատում ընկե-

րության գաղափարը, որ երբեք թույլ չեն տա դրա չարաշահումը աշխատանքային հարաբերություններում:

- Լինու՞մ են իրավիճակներ, երբ ձեզ հակաճառում են ձեր ենթակամները:

- Ոչ հաճախ, բայց լինում են: Եվ, անկեղծ ասած, դա իմ մեջ նեղատիվ վերաբերմունք չի առաջացնում հակաճառողի նկատմամբ: Նման դեպքերում ես միջև վերջ լսում եմ իմ խոսակցին և փորձում եմ ընկալել նրա մտքերի և առարկությունների հիմնավորումները: Եթե ես համոզվում եմ, որ խոսակցիս մոլորության մեջ է, ապա մտածում եմ գտնել հակափաստարկներ և դրանցով օգնել իմ «հակառակորդին» ճիշտ եզրահանգման գալու խնդրում: Եվ եթե դա ինձ հաջողվում է՝ դրանից ես պարզապես հոգեկան բավականություն եմ ստանում:

- Ինչպե՞ս եք ընդունում քննադատությունը:

- Կյանքում երբեք այնպես չի լինում, որ ամեն ինչ ընթանա, ինչպես ժողովուրդն է ասում՝ հալած յուրի պես: Մխալվելը՝ դժբախտաբար, թե բարեբախտաբար մարդկային բնույթից հեռու չէ, այնպես որ հաճախ է առիթ լինում ճաշակելու քննադատության դառը պտուղները, մանավանդ որ՝ լինելով պատասխանատու ղեկավար, ես իմ վրա եմ վերցնում նաև իմ ենթակամների կատարած սխալներն ու բացթողումները:

- Իսկ ի՞նչ գագաղություն եք ունենում, երբ զգում եք, որ սխալվել եք:

- Առաջին հերթին սկսում եմ մտածել, որ այդ սխալից պետք է նաև օգուտ քաղել: Դա ինչ-որ տեղ արդեն խաղաղեցնում է: Մխալը կրթիչ և դաստիարակիչ մեծ ուժ ունի, շատ հաճախ օգնում է ճիշտ եզրահանգումների գալու, ճիշտ ուղի ընտրելու գործում, և, ինչ խոսք, եթե մարդը կարողանում է սխալներից սովորել (ցանկալի է՝ ուրիշի սխալներից), ապա հետագայում սխալվելու դեպքերը պարզապես կարելի է հասցնել միմիմումի:

- «Տաշիրն» այսօր Ռուսաստանի մասշտաբներով հզոր տնտեսական և ֆինանսական միավորում է, որի վերընթաց ուղին տնտեսական հաջողությունների ապացույց և օրինակ կարող է լինել այսօր: Ի՞նչ եք կարծում՝ հնարավո՞ր է կոնկրետ մի կազմակերպության օրինակով բարձրացնել ամբողջ երկրի տնտեսությունը:

- Ինչ խոսք՝ առանձին հաջողակ կազմակերպությունների տնտեսական գործելաոճն ու ձեռագիրը օրինակ կարող է համընդհանուր մակրոտնտեսական ծրագրերի համար, բայց այդ մասին ավել շատ թող չհիմովնիկները մտածեն, իսկ մենք ցանկացած ժամանակ պատրաստ կլինենք աջակցելու այն ծրագրերին, որոնք կապահովեն երկրի տնտեսության վերելքը:

- Քանի որ հարցը մոտեցավ չինովնիկներին՝ հետաքրքիր է իմանալ՝ ինչպիսի՞ն են հարաբերությունները իշխանության տեղական մարմինների հետ և արդյո՞ք բոլոր հարցերում է հաջողվում հասնել փոխհամաձայնության:

- Այսօրվա ռուսական բիզնեսի առանձնահատուկ կողմերից մեկն էլ այն է, որ հաջողությունը կախված է նաև նրանից, թե ինչ աստիճանի փոխհարաբերություն ունի տվյալ տնտեսավարման օբյեկտը տեղական իշխանությունների հետ: Սակայն իրողություն է նաև այն, որ իշխանությունները ռեզիդենտներում օբյեկտի-վորեն նաև դառնում են նրանց աջակիցն ու հովանավորը, քանի որ այդ օբյեկտներին աշխատանքը նաև իրենց աշխատանքի հայելին է, վկայությունն այն բանի, որ տեղերում ճիշտ տնտեսական քաղաքականություն է տարվում: Մենք ի՞նչ ենք անում. ստեղծում ենք բարիք, ստեղծում ենք նոր աշխատատեղեր մարդկանց համար, կառուցում ենք, բարելավում և այլն, աղյուսում էլ հարկեր ենք մուծում տեղական զանգվածում: Ուրիշ ի՞նչ է պետք տեղական իշխանություններին: Տեղական ադմինիստրացիան նույնիսկ անհանգստության նշաններ է ցուցաբերում, երբ մեր կազմակերպության միջոցները ներդրվում են այլ ռեզիդենտներում: Դա մի տեսակ խանդի զգացողություն է, որը մեր մեջ եղած ճիշտ փոխանագործակցության վկայությունն է:

- **Սակայն ռուսական էկոնոմիկայի համար հատկանշական է նաև մեկ այլ հանգամանք: Տնտեսավարման միավորումները միաձայն վկայում են, որ վերջին տարիներին ռուսական էկոնոմիկայում բիզնեսի հետ կապված կոռուպցիոն ծախսերը պակասելու փոխարեն գնալով ավելանում են:**

- Ցավոք դա փաստ է, որ խոչընդոտում է տնտեսության առողջացման տեմպերին: Ասեն, որ կոռուպցիոն ծախսերի խնդիրը գոյություն ունի աշխարհի բոլոր երկրներում: Ռուսաստանում այն ընդունելի մակարդակի իջեցնելուն խանգարում են հետևյալ հանգամանքները. առաջին՝ մեծ թվով ադմինիստրատիվ խոչընդոտներ, որոնք չինովիկներին, այսպես ասած, ազատ մանևրելու հնարավորություն են տալիս, և, երկրորդ՝ անկախ դատական-արբիտրաժային համակարգի որոշակի անկատարությունը: Եվ ահա այս խոչընդոտներն էլ համախառն բիզնեսի ներկայացուցիչներին ստիպում են գտնելու խնդրի լուծման այլ, զարտուղի ճանապարհներ: Զինովիկը ոչնչով ռիսկի չի դիմում, իսկ նա, ով ներդրումներ է կատարում, գնում է որոշակի ռիսկի և այդ ռիսկն արդարացնելու համար նա պետք է գնա ամենամեծնտու ճանապարհով: Սա տնտեսագիտության մեջ արսիոմն է: Իսկ այդ ձեռնտու ճանապարհը, ցավոք, երբեմն դառնում է այն ճանապարհը, որից տուժում է երկրի էկոնոմիկան, տեղական բյուջեն, բոլորը՝ մի խոսքով:

- **«Տաշիրը» բազմաճյուղ կազմակերպություն է, սակայն նրա զարգացման և տարածման սահմաններն ավելի շատ ձգվում են դեպի առևտրի և սպասարկման ոլորտ: Լուրջ գիտատեխնիկական ներդրումներ պահանջող էկոնոմիկան մի կողմ է մտնում: Արդյո՞ք դա նույնպես բացատրվում է այսօրվա ռուսական էկոնոմիկայի առանձնահատկություններով:**

- Կազմակերպության պլանների և ստրատեգիական ձեռնարկումների դեկը մեր նախագահի՝ Սամվել Կարապետյանի մենաշնորհն է, որի ղեկավարությամբ էլ իրականացել են այսօրվա մեր ձեռքբերումները: Ես կարծում եմ, որ ամեն ինչ կլինի իր ժամանակին:

- **Այս հարցը, կարծում եմ, առանձնահատուկ հետաքրքրություն ունի մեր ընթերցողների համար: Հայտնի է, որ ձեռ կազմակերպությունը որոշակի ներդրումներ է կատարում նաև մեր հայրենի երկրի՝ Հայաստանի էկոնոմիկայում: Մեզ բոլորիս համար ցանկալի է, որ այդ ներդրումները կրկնապատկվեն ու տասնապատկվեն: Արդյո՞ք այսօրվա Հայաստանի տնտեսական-քաղաքական իրավիճակը հիմք է տալիս մեծամասշտաբ ներդրումների համար:**

- Ներդրումների համար երկու պայման է հարկավոր՝ հուսալիություն և եկամտի ընդունելի նորմա: Երկրորդը կլինի: Խնդիրը առաջինի հետ է կապված: Եվ եթե մեր հայրենիքի պետական այրերը իրենց գործունեությամբ նպաստեն երկրի իմվեստիցիոն մթնոլորտի առողջացմանը, ապա, կարծում եմ Հայաստանի տնտեսաբանությունը արագ վերընթացի ուղին կբռնի: Ասեն, որ համաշխարհային պատմության մեջ նման օրինակներ կան: Տայվանը, օրինակ, երկար ժամանակ գտնվել է տնտեսական շրջափակման մեջ՝ Զինաստանի կողմից: Եվ այդ պայմաններում երկրի ղեկավարի կողմից ներդրված ճիշտ տնտեսական մոդելը ուղղակի թռիչք ապահովեց այդ երկրի էկոնոմիկայում:

- **Իսկ ո՞րն է այդ մոդելի հիմնական «մեխը»:**
- Փոքր բիզնեսի մոդելի ներդրումն ու զարգացումը, ճկուն հարկային քաղաքականությունը:
- **Իսկ ի՞նչ հասկանալու ճկուն կարկային քաղաքականություն ասելով, ո՞րն է դրա էությունը:**

- Ցանկացած երկրի համար ամենազխալիկ հարցերից մեկը հարկային քաղաքականության իրականացումն է: Կարծում եմ, որ աշխարհի ոչ մի երկիր չունի այդ քաղաքականության համար

ընտրված իդեալական մոդել: Իդեալականին մոտ՝ կա, իդեալական՝ ոչ: Իմ ընկալմամբ հարկային քաղաքականության բուն իմաստն ու նպատակը հետևյալը պետք է լինի, ինչը ես կփորձեմ բացատրել մի իմաստուն ասացվածքով՝ լավ հովիվը իր ոչխարներին խուզում է միայն և ոչ թե մաշկահան անում նրանց: Հրաշալի իմաստություն է սա, որ շատ պատկերավոր բացատրում է խնդրի էությունը և նպատակը:

- **Հետաքրքրվո՞ւմ եք քաղաքական խնդիրներով:**

- Մեր ամբողջ կյանքը քաղաքականացված է: Ինձ շատ է դուր գալիս Բիսմարկի մի արտահայտությունը, որ եթե դու չզբաղվես քաղաքականությամբ, ապա մինևույն է՝ քաղաքականությունը կզբաղվի քեզանով: Քաղաքական խնդիրների նկատմամբ, ինչ-խոսք, չեն կարող անտարբեր մնալ: Հետևում են նաև Հայաստանի քաղաքական կյանքին, ինչքան որ ժամանակը թույլ է տալիս, իհարկե: Եվ Ռուսաստանում, և՛ Հայաստանում ինձ համար հետաքրքրություն են ներկայացնում միայն այն քաղաքական ուժերն ու քաղաքական ժողովուրդը, որոնք կնպաստեն մեր երկու ժողովուրդների քաղաքական-տնտեսական մերձեցմանն ու փոխներթափանցմանը: Մենք՝ հայերս, ռուսական մշակույթով ու կուլտուրայով սնված ու դաստիարակված ժողովուրդ ենք, և, եթե ընդունված է կարծել, որ փոքր ժողովուրդները չեն կարող ինքնուրույն գոյատևել ու զարգանալ առանց կողմնորոշման, ապա իմ կարծիքը միանշանակ է. մեր հայերիս կողմնորոշումը պիտի լինի միայն դեպի Ռուսաստան:

- **Իսկ այդ քաղաքական-տնտեսական կողմնորոշման գործում ի՞նչ դեր կարող են ունենալ վերջին տասնամյակում Ռուսաստանի տարբեր ռեզիդենտներում ձևավորված հայկական համայնքները:**

- Ամենավճռական դերը: Չմոռանանք, որ այդ համայնքները նաև խոշոր տնտեսավարման միավորներ են, իսկ քաղաքականությունը ուր էլ գնա՝ տնտեսությունից, ֆինանսներից հեռու փախել չի կարող:

- **Այսօր Կալուգայում և նրա մարզում «Տաշիրը» մարդկանց համար նաև հայկական համայնք է նշանակում: Ի՞նչ զգացողություն է դա ձեզ մոտ առաջացնում:**

- Միայն հպարտություն, չնայած որ մեզ մոտ առաջանում է լրացուցիչ պատասխանատվության խնդիր: Ինչ էլ որ մենք անենք, ինչ գործ էլ որ ձեռնարկենք, պիտի մտածենք նաև, որ մենք ներկայացնում ենք ոչ միայն որոշակի տնտեսավարման օբյեկտ կամ կազմակերպություն, այլ մի ամբողջ ժողովուրդ ու երկիր:

- **Իսկ կարո՞ղ է արդյոք մեր համայնքի և մասնավորապես Ռուսաստանի փոքր ազգային կազմակերպությունների համար անհանգստություն տեղիք տալ երկրում այսօր նկատվող մացիոնալիստական տրամադրությունների աճը:**

- Կարծում եմ, որ ոչ, քանի որ երկրի իշխանությունները և տեղերում, և՛ կենտրոնում շատ չոր և սկզբունքային դիրքորոշում ունեն այդ երևույթի նկատմամբ: Այդ շարժումների ներկայացուցիչներն ու ղեկավարները չնայած քողարկվում են կեղծ հայրենասիրական լոզունգներով, այնուամենայնիվ ակնհայտ է, որ դրանք թշնամիների կողմից ձեռնարկվող քայլեր են, որոնց նպատակը երկրի հիմքերի խարխուլումն է: Մեր Կալուգայի համայնքի համար՝ մասնավորապես, անհանգստության խնդիրներ լինել չեն կարող:

- **Ձեր գործունեության մեջ դուք ունեք նկատելի հաջողություններ, կյանքում նյութական ապահովության խնդիր չունեք, ամենուր գտնվում եք բարեկեցիկ մթնոլորտում և այլն: Այնուամենայնիվ՝ ինչ է ձեզ համար գեղեցիկ ապրելը:**

- Նյութական ապահովվածությունը, կոմֆորտը և այլն գեղեցիկ ապրելու հետ ոչ մի կապ չունեն: Իմ ընկալմամբ գեղեցիկ ապրելն այն է, երբ խիղճդ հանգիստ է, երբ քեզ շրջապատում են անկեղծ և շիտակ մարդիկ, որոնք քեզ սիրում են, իսկ դու էլ սիրում ես նրանց:

- **Ինչպե՞ս եք վերաբերվում հուճկոն:**

- Լինում են գերլարված պահեր, որից կարելի է ազատվել միայն հուճկոնով: Պատկերացրեք՝ եթե մարդը նման պահերի կորցնի իր հուճկոնի զգացողությունը: Հուճկոն ուղղակի փրկիչ դեղամիջոց է, ոչ մի բան այնպես հրաշալիորեն չի կարող լիցքաթափել մթնոլորտը, մասնացույց անել մարդկային թերությունն ու սխալել, ինչպես որ տեղին և ճաշակով ասված սրամտությունը:

- **Աշխատանքից դուրս ինչո՞վ եք «տաքացնում» ձեր սիրտը:**

- Սիրում եմ լինել ընկերներիս շրջապատում և պարզապես՝ անկաշկանդ զրուցել ու փոխհարդրակցվել: Նման պահերի ես հոգով խաղաղվում եմ: Պարբերաբար լինում են Հայաստանում, իմ ծննդավայրում, քայլում իմ մանկության արահետներով: Դա իմ կյանքին նոր լիցքեր է տալիս:

Գեղեցիկին կարելի է հասնել... ոչնչով

Կարինե Գլոյանի անհատական ցուցահանդեսում

Ամենափոքր գեղեցիկն իսկ մեր մեջ բեկուն է ամեն մի տխուր խոհ, դժվարություններ ու ժամանակավոր մահանջ և, ամենակարևորը, չի կորչում իր՝ գեղեցիկի կենարար ուժը: Պարզապես այն պետք է նկատել: Ուրեմն փորձենք նկատել այդ գեղեցիկը, անենք ամեն ինչ, որ այն տարածվի ամենուր և դուրս մղի մեր միջից բացասական լիցքերը:

Մի պահ մոռանանք «անցման շրջաններն» ու «ժամանակի հրամայականները», մարդկային ազատությունն ու թշնամանքը և անդրադառնանք գեղեցիկին: Այն գեղեցիկին, որ թաքնված է Կարինե Գլոյանի աշխատանքներում:

Առաջին հայացքից բավական պարզ և հեշտ թվացող այս զբաղմունքը իրականում պահանջում է բավական նուրբ երևակայություն, ընկալող աչք, որից չի վրիպում այն, ինչի կողքով ուրիշներն անցնում են ու մատնում անտարբերության:

Խորամուղ լինելով ստեղծված կերպարների էության մեջ, որոնք անգամ եթե մտացածին էլ են, ապա դարձյալ կոնկրետ ժամանակի ծնունդ են և ունեն իրենց «հոգեբանությունն» ու «բնավորությունը»:

Ընդհանրապես, արվեստի ցանկացած գործ, լինի դա գիրք, նկար, երաժշտություն, թե Կարինե Գլոյանի կյանքի կոչած պապիե-մաշեի տիկնիկներ, կարելի է ասել, զրուցակիցներ են, որոնք հաճույքով զրույցի կբռնվեն քեզ հետ, եթե դու կարողանաս խոսեցնել նրանց: Ահա, թե ինչու գեղեցիկի հետ հանդիպումը հոգեկան բավականություն է պարզապես նրան, ով գեղագիտական ճաշակ ու դաստիա-



րակություն ունի:

Ընկալումը միշտ էլ անհատական է՝ կախված տվյալ անձնավորության հոգեկան կարողություններից ու պատկերացումներից:

Կարինե Գլոյան անհատի մղումը այնպիսին է, որ ինչի էլ ձեռք գարկի, միևնույն է, գեղեցիկ է ստացվելու, ներշնչում է ընդ-

գրկելու և հիացմունքով համակելու մարդկանց: Նրա՝ այս աշխատանքների ցուցադրությունը ևս մի հրաշալի ու ամփոփիչ խոսք է գեղեցկության, քանզի ինքը ևս մի գեղեցկություն է շատերի աչքերում:

«Թող չթվա, թե պապիե-մաշեով ստեղծ-





ված այս գործերը ավելի հեշտ է կյանքի կոչվում, քան յուղաներկով նկարելն ու քանդակը: Պապիե-մաշեն էլ ունի իր քմահաճույքները, պահանջում է յուրահատուկ մոտեցում ու վերաբերմունք:

Այո, վերաբերմունք, որովհետև գեղեցկության, արտահայտչականության ու նրբության հասնելու համար պիտի կարողանալ այն, ինչ օգտագործում ես (իսկ օգտագործել եմ այն ամենը, ինչը կոչվում է թափոն՝ փայտի տաշեղ, ամենատարբեր կտորի լաթեր, վայրի լոբու հատիկներ...) խոսեցնել այն լեզվով, որը պահանջում է համառ ու հետևողական աշխատանքը: Այլ խոսքով, պապիե-մաշեն էլ է պահանջում առավելագույն հավաքվածություն, կարգ ու կանոն՝ բացառելով շտապողականու-



թյունը, հապճեպությունը» - ասում է Կարինե Գլոյանը:

Խաչիկ Ղարաբեկյան - գեղանկարիչ, Հայաստանի նկարիչների միության անդամ. «Ամեն մարդու աստօն շնորք է տրված: Կարինե Գլոյանը ոչ մեկին նման չէ, անսպա-



սելի հայտնություն է, որ մեզ տանում է հին ու բարի ժամանակներ, թողնում հուշերում անցյալի»:

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ
Լուսանկարները՝ Վահե ԹՈՎԱՍՅԱՆԻ

ԳԱԼԻՍ ԵՆ ՈՒ ԳՆՈՒՄ

Ընթացիկ տարվա հունվար-մարտ ամիսներին Հայաստան է ժամանել 2,5 հազար և մեկնել 4,1 հազար մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2,5 և 3,9 հազարի փոխարեն: Միգրացիայի բացասական սալդոն (մեկնածուների և ժամանածների տարբերությունը) կազմել է 1,6 հազար՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 1,4 հազարի փոխարեն: Միջպետական միգրացիայի ուղղությունների վերաբերյալ ստացված տվյալներով, անցած տարի հանրապետությունում հաշվառման կանգնած 1,5 հազար մարդուց 52,6 տոկոսը ժամանել է Ռուսաստանի Դաշնությունից (ՌԴ), 7,8-ը՝ Վրաստանից, 11,8-ը՝ ԼՂՀ-ից, 4-ը՝ Ուկրաինայից, 0,8-ը՝ Ղազախստանից և 23 տոկոսը այլ երկրներից: Սեկնողների 9,2 հազարից 67,4 տոկո-

սի մեկնման ուղղությունն է Ռուսաստանի Դաշնություն, 7,2-ինը՝ ԱՄՆ, 6,9-ինը՝ ԼՂՀ, 4,8-ինը՝ Ուկրաինա, 13,7-ինը՝ ԱՊՀ մյուս երկրներ, Իսրայել, Կանադա, Գերմանիա և այլ երկրներ: Ներքին միգրացիոն տեղաշարժերի արդյունքում ստացված տվյալներով, անցած տարի քաղաքից քաղաք է տեղափոխվել 2,8 հազար մարդ, 1,7 հազարը տեղափոխվել է գյուղից քաղաք: Քաղաքից գյուղ է մեկնել 2,9 հազարը:

ՄԵՐՈՆՔ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մոսկվայի մարզի Ներքին գործերի նախարարության վիզաների և անձնագրային վարչության պետի տեղեկատվությամբ, անցյալ տարի Մոսկվայի մարզում հաշվառվել են ժամանակավոր բնակվող ավելի քան

400 հազար օտերերկրյա քաղաքացիներ: Նրանցից 39 հազարը, ինչպես տեղեկացնում է «Մոսկովսկայա պրավդան», Հայաստանի քաղաքացիներ են:

ՄԵՎԱՆԸ ԲԱՐՉՐԱՆՈՒՄ Է

2005թ. մայիսի 3-ին Սևանա լիճը գտրնվում էր ծովի մակերևույթից 198 մ 02 սմ բարձրության վրա, ինչը 47 սմ-ով ավելի է նախորդ տարվա նույն օրվա միջից: Այս տարվա ամենացածր միջը գրանցվել է մարտի 1-ին՝ 1897 մ 72 սմ: Սա նշանակում է, որ վերջին երկու ամիսների ընթացքում լճի մակարդակը բարձրացել է 30 սմ-ով, որից 14 սմ-ն՝ վերջին 13 օրերի ընթացքում:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՄԵԾԵՐԸ ԵՎ ՇԱԽՄԱՏԸ



Վաղագետ Վաղարշ Ա

Շախմատը հաճելի ժամանց է եղել պատմական նշանավոր շատ դեմքերի համար: Հայտնի է, որ շախմատ խաղալ սիրել են ռուս հայտնի գիտնական Լոմոնոսովն ու լեհ պատմաբան Ասկենազին, ֆրանսիացի մաթեմատիկոս Պուանկարեն և ռուսիացի աստղագետ Պաուլին (վերջինս հրապուրված էր նաև շախմատային խնդիրներ կազմելով և դարձավ աշխարհի առաջատար շախմատային կոմպոզիտորներից մեկը): Շախմատը սիրված խաղ է եղել նաև ռուս գրողներ Պուշկինի, Լերմոնտովի, Չեռնիշևսկու, Գերցենի, Տուրգենևի, Տոլստոյի, աշխարհահռչակ նկարիչներ Ռեմբրանդտի, Ռեպինի, կոմպոզիտորներ Բեթհովենի, Շոպենի և այլոց համար:

Շախմատի մեծ սիրահար էր 14-րդ դարի մոնղոլ հայտնի նվաճող և տիրակալ Լենկեթեմուրը: Նա համոզված էր, որ իսկական

ռազմիկին վայել են երկու կիրք՝ որսը և շախմատը: Ավանդության համաձայն, երբ նա իր մրցակիցներից մեկին հաղթում է՝ մատ հայտարարելով արքայական նավակով, գալիս են սուրհանդակները և հայտնում, որ նրա կինն արու գավակ է ծնել: Տեղեկացնում են նաև, որ ավարտվել է մեծ նվաճողի հրամանով Սիխոն գետի վրա կառուցվող քաղաքի շինարարությունը: Նա նորածնին կոչում է Շախրուխ, իսկ քաղաքը՝ Շախրուխիս (շախ՝ արքա և ռուխ՝ նավակ բառերից):

Լենկեթեմուրը մայրաքաղաք Սամարղանդ է հրավիրում մասնագետների՝ երիտասարդությանը շախմատ սովորեցնելու: Շախմատի վարպետ Գալալդինը իր գիտելիքներով գերազանցում էր բոլորին և ցանկացածին հաղթում, ընդ որում խաղաքարի նվիրումով: Թամերլանը նրան ասում է. «Դու առաջինն ես շախմատում, իսկ ես՝ երկիր կառավարելու գործում: Մենք երկուսով անպարտելի ենք, յուրաքանչյուրս՝ մեր բնագավառում»:

Շախմատի սիրահար է եղել նաև Իվան Ահեղը: Նրա կյանքի վերջին րոպեների մասին պահպանվել են այդ օրերին Մոսկվայում գտնվող Անգլիայի դեսպանի հուշերը:



Թամերլան

Դեսպանը գրում է, որ կանխագալով իր վախճանը՝ Իվան Ահեղը հրամայում է բերել շախմատի խաղասեղանը, իր ձեռքով դասավորում է խաղաքարերը: Վերջին խաղաքարը արքան չդրած՝ Իվան Ահեղը վախճանվում է:

15-րդ դարի ուզբեկ մեծ բանաստեղծ և մտածող Վաղարշ Ա շախմատի մասին իր «Թեջուհների լեզվով» պոեմում շախմատը հակադրում է պատերազմին և ասում. «Ազնիվ մենամարտ, որը կործանարար հետքեր չի թողնում»: «Այս աշխարհի ուժեղները չպետք է գոռոզանան իրենց ոճով և նշանակալիությամբ, քանի որ խաղի ավարտից հետո, երբ խաղաքարերը հավաքվում են պարկում, արքաները կարող են հայտնվել ներքևում, իսկ զինվորները՝ վերևում», - ավելացնում է մեծ մտածողը:

Ալբերտ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԻՏԵՔ ՈՐ...

Շախմատը հին Հայաստանում հայտնի է եղել հնուց: Նման եգրակացության հիմք տալիս են միջնադարյան հայ ձեռագրերը: Այդ խաղի մասին տեղեկություններ կան Մխիթար Անեցու և Վարդան Արևելցու գործերում: Պահպանվել են շախմատի որոշ հին անվանումներ՝ «ճատրակ», «ճատրկուց»: Սակայն հնագիտական պեղումները հաստատում են, որ Հայկական լեռնաշխարհում շախմատը հայտնի էր շատ ավելի վաղ (ըստ ակադեմիկոս Լ. Օրբելու՝ 9-րդ դարից): Օրբելու վկայության համաձայն, Ապարանի շրջանի Բլխեր (այժմ Շենավան) գյուղի բնակիչները մինչև 20-րդ դարի կեսերը խաղում էին ինքնաշեն շախմատներով, որոնք ձևով նման էին միջնադարյան շախմատներին:

- 1926-27թթ. շախմատի սիրահար, քիմիական գիտությունների դոկտոր Ս. Հովյանի նախաձեռնությամբ Հայաստանի մի շարք թերթերում բացվեցին շախմատային բաժիններ, որոնք նպատակաուղղված էին շախմատային շարժման աշխուժացմանը: Ս. Հովյանը անց էր կացնում միաժամանակյա խաղի սեանսներ, կարդում դասախոսություններ շախմատային բազմաբնույթ հարցերի մասին: Նա հայերեն թարգմանեց Է. Լասկերի, Յ. Ռոխլինի, Ի. Մայզելիսի գրքերը, մեծապես նպաստեց այդ խաղի զարգացմանը:

- 1934թ. Երևանում կազմակերպվեց և անցկացվեց շախմատի Հայաստանի առաջին առաջնությունը: Չեմպիոնի կոչումը նվաճեց երիտասարդ առաջին կարգային Հենրիկ Գասպարյանը, որը հետագայում ևս 9 անգամ արժանացավ այդ պատվավոր կոչմանը: 1956թ. նրան շնորհվեց ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետի կոչում: Նա մեկն էր այն 4 շախմատիստներից, որոնց 1972թ. շնորհվեց միջազգային գրոսմայստերի պատվավոր կոչում շախմատային կոմպոզիցիայի գծով: Հ. Գասպարյանը շախմատային էտյուդներ կազմելու գործում հասավ մարզական փայլուն հաջողությունների և իրավամբ համարվում էր աշխարհի անթագակիր արքա:

- 1934թ. Երևանում անցկացվեց նաև շախմատի կանանց առաջին առաջնությունը: Չեմպիոնի կոչումը նվաճեցին երկու շախմատիստուհիներ՝ Ս. Մակինցը և Ս. Միրզա-Ավագյանը, որոնք բաժանեցին առաջին և երկրորդ տեղերը:

- 1936թ. Երևանում բացվեց շախմատային առաջին ակումբը, որի տնօրենը Անդրանիկ Հակոբյանն էր (հետագայում՝ վաստակավոր մարզիչ, միջազգային արբիտր): 1950թ. շախմատային ակումբներ բացվեցին նաև Կիրովականում և Լենինականում:

- 1960 թվականից Երևանում գործում է պատանի շախմատիստների մարզադպրոցը:

- 1930 թվականին Հայաստանում լույս ընծայվեց շախմատի վերաբերյալ հայերեն առաջին գիրքը՝ «Սկսնակ շախմատիստ» վերնագրով, որի հեղինակն էր Հենրիկ Գասպարյանը:
- Հայաստանում 1972-ից ի վեր հրատարակվում է Հայաստանի շախմատային ֆեդերացիայի «Շախմատային Հայաստան» պաշտոնական հանդեսը, որի հիմնադիրը և անփոփոխ խմբագիրն է անվանի շախմատային լրագրող և մարզական մեկնաբան, շախմատի համաշխարհային ֆեդերացիայի եվրոպական 5-րդ գոտու նախագահ Գագիկ Հովհաննիսյանը:

Ալբերտ ԳՐԻԳՈՐՅԱՆ, սպորտի վարպետ

ԿՄՐՅԵՆ ԿԱՐՊՈՎՆ ՈՒ ԳՈՐԲԱԶՈՎԸ

Այս տարվա աշնանը աննախադեպ շախմատային մրցամարտ է տեղի ունենալու ամերիկյան Կանգաս նահանգի Լինդսբորո քաղաքում: Շախմատային խաղատախտակի առաջ կնքեցին ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահ Միխայիլ Գորբաչովը և աշխարհի 12-րդ չեմպիոն Անատոլի Կարպովը: Մրցախաղը կանցկացվի «Շախմատը հանուն խաղաղության» ծրագրի շրջանակում: Հանդիպումը կայանալու է Լինդսբորոյի շախմատի դպրոցում, որը հիմնել է Կարպովը:

ԳՈՆԵ ՇԱԽՄԱՏՈՎ ԵՆՔ ԱՌԱՋ



Շախմատի միջազգային ֆեդերացիայի՝ ՖԻԴԵ-ի վարկանիշով, ապրիլի 1-ի դրությամբ աշխարհի 100 ուժեղագույն շախմատիստների թվում են Հայաստանի հինգ ներկայացուցիչներ՝ Վլադիմիր Հակոբյանը, Լևոն Արոնյանը, Սմբատ Լպուտյանը, Ռաֆայել Վահանյանը և Գաբրիել Սարգսյանը: Վլադիմիր Հակոբյանը կրկին անցել է վարկանիշային 2700-ի սահմանագիծը, որը գերգրոսմայստերական ցուցանիշ է, և 2703 վարկանիշով աշխարհում թիվ 17-րդն է: Երիտասարդ գրոսմայստեր Լևոն Արոնյանը 2693 ցուցանիշով 21-րդն է: Անհատական ցուցանիշներից բացի, միջին վարկանիշներով բարձր տեղ ունի նաև Հայաստանի հավաքականը, որը նախորդ ցուցակում 6-րդն էր, իսկ հիմա 3-րդն է՝ Ռուսաստանից և Ուկրաինայից հետո: Այս երկրները համաշխարհային օլիմպիադայի առաջին և եվրոպայի առաջնության մրցանակակիրներ են: Հայաստանը լավագույն ցուցանիշներով առաջ է անցել շախմատային այնպիսի երկրներից, ինչպիսիք են Ֆրանսիան, Իսրայելը, Հունգարիան:

ԱՐԹՆԱՅԵՔ, ԿՈՄՄ, ԶԵՉ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ՄԵԾԱՄԵԾ ԳՈՐԾԵՐ

Ցավոք, քչերը մեզանում գիտեն, որ մարտի 21-ին աշխարհը նշում էր Քնի միջազգային օրը: Եվ չնայած բոլորս էլ ամեն գիշեր ընկղմվում ենք քնի մեջ, այդ երևույթի բնույթը առ այսօր խորին գաղտնիք է գիտնականների համար:

ԻՆՉՈ՞Ւ ԵՆՔ ՔՆՈՒՄ

Ահա արդեն երկար տարիներ գիտնականները ճգնում են պատասխանել «Ինչի՞ համար են իրականությունից այդ ամենօրյա հեռացումները, որոնք մենք անվանում ենք քուն» հարցին: Վերջին շրջանում երևան եկած բազմաթիվ հետազոտությունների մեջ ապացուցվում է քնի օգտակարությունը: Այսպես. քնի խնդիրներով զբաղվող հիմնադրամի (ԱՄՆ) մասնագետները պարզել են, որ աշխատավայրում պարբերաբար քնող մարդիկ շատ ավելի արդյունավետ են աշխատում, քան ողջ օրվա ընթացքում արթուն մնացող գործընկերները: Օրական մի քանի անգամ 15-20 րոպե ննջելը բավական է կարգավորելու մարդու ինքնազգացողությունը, համարում են գիտնականներն ու խորհուրդ տալիս ղեկավարներին իրենց հիմնարկներում ստեղծել հատուկ «քնասենյակներ»: Իսկ ահա Ալեքսանդրոս Վոզնոցասը (Փենսիլվանիայի պետական համալսարան), համոզված է, որ հենց քունն է երկարացնում կնոջ կյանքը. նրանք միջինը 6-7 տարով ավելի երկար են ապրում, քան տղամարդիկ: Գիտնականի կարծիքով, դա պայմանավորված է նրանով, որ թույլ սեռի ներկայացուցիչները կատարելապես տիրապետում են խոր քնի արվեստին: Եթե տղամարդկանց պարագայում դրա տևողությունը գիշերվա մեջ ընդամենը 40 րոպե է, ապա կանանցը՝ ամբողջ 70: «Ես կարծում եմ, որ դա հարմարվողական մեխանիզմ է, որը գեղեցիկ սեռի մոտ ձևավորվել է էվոլյուցիայի ընթացքում, - համարում է գիտնականը: - Կինը ստիպված է լինում արթնանալ գիշերվա կեսին՝ մանկանը կերակրելու համար: Ուժերի կորուստը փոխհատուցվում է խոր, հանգիստ քնով»:

ՈՐՔԱՆ ԵՆՔ ՔՆՈՒՄ

Բոլոր կաթնասունները քնում են, բայց տարբեր տևողությամբ: Կատվազգիները վայելում են քունը օրական 18-20 ժամ: Պրիմատների քնի տևողությունը 6-10 ժամ է: Իսկ ինչքա՞ն ժամանակ պետք է քնի մարդը: Այս հարցում գիտնականները միակարծիք չեն: «Քրոնիկական քնատուրությունը չափազանց վնասակար է, քանզի ուժգին է անդրադառնում հորմոնալ նյութափոխանակության վրա», - համարում է Եվա Վան Կաուտերը (Չիկագոյի բժշկական համալսարանի պրոֆեսոր): Գիտավործի ընթացքում նրան հաջողվել է պարզել, որ օրական ընդամենը 4 ժամ քնող կամավորների օրգանիզմում լեպտինի (բաղցի զգացումը ճնշող հորմոն) մակարդակը կրճատվում է 18 տոկոսով, իսկ գրեխնի (ախորժակը խթանող հորմոն) մակարդակը բարձրացնում 28 տոկոսով: Արթնանալով, գիտավործի ենթարկվողները գերադասում են քաղցր և օւլայով հարուստ սնունդը (թխվածք, կարկանդակ) քանցարեղենից, մրգերից ու կաթնամթերքից: Գիտնականի կարծիքով, անբավարար քնից անհանգստացած ուղեղը նման պարզունակ միջոցով կուտակում է իր սնուցման համար անհրաժեշտ ածխաջրերի ռազմավարական պաշար: Դրանով է, մասնավորապես, բացատրվում, որ քրոնիկական քնատուրողի ավելի գեր են, քան նորմալ քնողները: Իսկ ահա Նագոյայի ճապոնական համալսարանի պրոֆեսոր Ակիկո Տամակոսիմ պնդում է, որ չափից ավելի տևական քունը նույնքան վնասակար է, որքան քնատուրությունը: 20 տարի շարունակ հետևելով երկրի 40 շրջաններում բնակվող 110 մարդկանց ինքնազգացողությանը, նա պարզեց, որ մահացության ամենացածր մակարդակն արձանագրվում էր օրական 6,5-7,5 ժամ քնողների շրջանում: 4,4 ժամից պակաս քնող մարդկանց կյանքը կրճատվում էր միջինը 1,6 անգամ: Սակայն առավել վնասակար օրական 8-9,5-ժամյա քունն է: Այդ դժբախտները մահանում էին 1,7-1,9 անգամ ավելի հաճախ, քան նվիրական 7 ժամ քնողները:

ՈՐՏԵՂԻ՞Ց ԵՆ ԳԱԼԻՍ ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԵՐԱԶՆԵՐԸ

Ներկայումս հաստատված փաստ է, որ մի գիշերվա ընթացքում մարդիկ տեսնում են մի քանի երագ: Այսինքն՝ գոյություն ունի «արագ քուն» (ակտիվ) և «դանդաղ քուն» (պասիվ): Առաջինը բնութագրվում է ուղեղի ակտիվ գործունեությամբ, սրտի անկանոն աշխատանքով, ամուր փակած կուպերի հետևում աչքերի արագ շարժումներով: Հենց այդ ժամանակ էլ մենք տեսնում ենք երագները, բայց ի՞նչ է դրանց հետևում կանգնած: Ըստ տարածված վարկածի, երագները այլակերպված ու տարօրինակ ձևով արտացոլում են քնից առաջ մեր տեսածը: Եվ իսկապես, Ուելսի համալսարանում (Մեծ Բրիտանիա) անցկացված հետազոտությունը ցույց է տվել, որ մարդու զրական մախախտությունները անմիջական ազդեցություն են գործում նրա երագների վրա: Այսպես. վիպագրական ժանրի սիրահարները տեսնում են առավել տարօրինակ երագներ և երկար մտապահում դրանք: Ֆանտաստիկայի երկրպագուները կամ մղձավանջներ են «դիտում», կամ քնում լրիվ չանջատված գիտակցությամբ, այսինքն՝ գիտակցում, որ քնած են: Իսկ ահա սիրավեպեր ընթերցողների երագները լեփ-լեցուն են զգացմունքներով: Ամենաուժեղ ներգործություն, սակայն, գրքերն ունենում են երեխաների վրա: Ըստ որում՝ որքան փոքր է երեխան, այնքան ավելի մեծ տպավորություն է գործում ընթերցանությունը: Որպես հետևանք, սարսափելի հեքիաթներ կարդացող երեխաներին գիշերային մղձավանջները հետապնդում են երիցս հաճախ, քան նրանց, ովքեր «գարհուրիկներ» չեն կարդում:

Ի՞ՆՉ ԵՆՔ ԱՆՈՒՄ ՔՆԱԾ ԺԱՄԱՆԱԿ

Նույնիսկ երեխան գիտի, որ գիշերները մարդիկ քնում են ու երագներ տեսնում: Սակայն գիտնականների վերջին հայտնագործությունները ստիպում են կասկածի տակ առնել այդ տարածված կարծիքը: Առաջին սենսացիոն հայտնագործությունն արեց Մարիե Շեուրը (Տուրկուի համալսարան, Ֆինլանդիա): Հետազոտելով նորածիններին, նա պարզեց, որ քնած ժամանակ նրանք ավելի ընթերցող են, քան արթնի վիճակում: Գիտնականն ուշադրություն դարձրեց, որ բանավոր խոսքի ընկալման համար պատասխանատու ուղեղի կենտրոնների գործունեությունը շարունակվում է ամուր քնած նորածնի օրորոցի մոտ ծայնավորների արտաբերումից ժամեր հետո: «Ամհավանական է հնչում, բայց, ըստ երևույթին, նորածինները սովորում են քնած ժամանակ», - պարզաբանում է գիտնականը: Իսկ ահա Սիդնեյի (Ավստրալիա) Ալֆրեդի թագավորական հոսպիտալի դոկտոր Պիտեր Բյուկենենը հայտնագործել է քնի հետ կապված գիտությանն անհայտ հիվանդություն: Նրա խնամյալներից մեկը՝ բալզակյան տարիքի մի կին, ժամանակ առ ժամանակ ելնում էր անկողնուց և առանց արթնանալու սեքսով զբաղվում բացարձակապես անծանոթ տղամարդկանց հետ: Ասենք, սովորաբար մարդիկ տառապում են ոչ թե քնի մեջ արածներից, այլ անքնությունից:

ԹՈՒՐԿԻԱՆ ՊԵՏՔ Է ՃԱՆԱԶԻ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
Կարծում է ԱՄՆ նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթը
«Կարծում եմ՝ դրանից վնաս չի լինի. մեծ ազգերը կարողանում են ներողություն խնդրել», հայտարարել է Վաշինգտոնում «Բուլեթինգ» ինստիտուտի և ստանբուլյան «Սաբանչի» համալսարանի կազմակերպած գիտաժողովին ԱՄՆ նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթը պատասխանելով այն հարցին, թե պետք է արդյոք Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը: Ըստ թուրքական «Չաման» թերթի՝ որպես օրինակ բերելով Գերմանիան, Մադլեն Օլբրայթը նշել է, որ «հայկական հարցը շատ զգայուն է, և չնայած հայերն ու թուրքերը տարբեր ձևով են մոտենում այդ խճճված պատմական խնդրին, կարևոր է կարողանալ թողնել անցյալը հետևում: Անելով դա՝ Թուրքիան կարող է դառնալ տարածաշրջանի առաջատար երկիրը», ավելացրել է նա:

ԱՐՄԻՆՅՈՒՆ

ՎԱՍՄԱԿ ԴԱՐԲԻՆՅԱՆ. «ԵՂԾ ԱՌԱԾՈՑ»

մղձավանջ

Կեսգիշերին մարդը վատ երագից արթնացավ և քունը կորցրեց: Փորձեց լույսը վառել, բայց իշխանությունները լափել էին հանրապետության ամբողջ մագուղը, և լույս չկար: Հիշեց, որ մոմ էլ չկա: Ոչ էլ նույնիսկ լուցկի: Սենյակը ոչ միայն խավար էր, այլև ցուրտ:

Մարդը վեր կացավ, խորխափելով հազավ շորերը և քանի որ բացարձակապես անելիք չուներ որոշեց մութ սենյակում սև կատու փնտրել: Ինքը կատու չէր պահում, և միտքը հուշում էր, որ իր սենյակում ոչ մի կատու էլ չկա: Առավել ևս՝ սև կատու: Բայց մի տեսակ կորցրել էր հավատը անեն ինչի նկատմամբ:

Նա ծնկաչոք տնդեց գորգը, ձեռքը տարավ մահճակալի, ապա սեղանի տակ, հրեց աթոռը, հասավ պահարանին, բացեց դռները և քրքրեց դարակները: Կատուն թեև չկար, բայց մարդը նպատակապես փնտրում էր: Շոշափեց ամեն տեղ, նույնիսկ պահարանի գլուխը ստուգեց, սենյակի անկյուններին մոտենալիս ճակատը երկու անգամ զարկեց պատին, երրորդ և չորրորդ անկյուններում մուրդվեց, բայց չհուսահատվեց:

Գիշեր էր, սենյակը սարսափելի մութ էր և ցուրտ: Մարդը հասկանում էր, որ իրեն ոչ մի սև կատու էլ պետք չէ: Մանավանդ որ՝ չուներ: Բայց համառորեն փնտրում էր:

Ի վերջո գտավ անտերին: Իր անկողնում քնած էր: Բռնեց կատվի վզից, բացեց պատուհանը և դուրս շարուտեց: Կատուն չարագուշակ մկավեց և հասցրեց դաժանաբար ճանկռել ձեռքը:

Անցել են տարիներ, բայց ճանկռածի սպին մինչև օրս մնում է:

հովվերգություն

Այդը կանգնած էր քարափին, երկընտրանքի առջև:

Իրենից վեր՝ քարափի գլխին, իր նման մի ուրիշ այծ կար, իսկ ներքևում արածում էր ոչխարի հոտը: Մազվեց քարափին ի վեր, գնալ ցեղակցի մո՞տ, թե՛ միանալ մի սուրու ոչխարին. ցեղ էր խնդիրը: Նա չէր մտածում, քանի որ այծերը մտածել չգիտեն: Ոչ էլ կարող էր երկու տարբերակների թեր և դեմ կողմերը հաշվարկել: Իրեն ընդամենը տրված էր կողմնորոշվելու առիթ, տված դեպքում լինել այժման կամ ոչխարամետ:

Եվ նա տմբոմբացրեց մորուքը, քանզի նման ճակատագրական պահերին այծերը վարվում են ճիշտ այդպես: Նաև մկկաց, որովհետև լռությունը դառնում էր ճնշող:

Չափազանցություն կլինի, եթե ասեք, թե միջազգային համրությունում ուշադիր հետևում էր այդ գործընթացին: Շրջակայքում ընդամենը մի չորսն կար, որն անհաղորդ էր այծի տվախանքներին:

Այծը աջ ու ախյակ նայեց քարափին արածելու բան չկար այլևս, վերջին խոտը ծամել էր: Ոտքի տակից մի քար գլորվեց, ի հաստատումն իմաստուն ճշմարտության, թե աշխարհում հաստատուն ոչինչ չկա: Վայրկյան առ վայրկյան իրավիճակն ապակայունանում էր, և այծի համար ստատուս-քվոյի պահպանումը դառնում էր անհնար:

Եվ նա մազվեց վեր: Սկզբում կարելի էր կարծել, թե այծը գերադասել է իր ցեղակցին: Բայց ոչ: Հանդիսավոր շրջանցեց նրան, կածանով իջավ և միացավ ոչխարի հոտին:

Ըստ երևույթին նրա համար այնքան էլ հետաքրքիր չէր այծի հետ մնալը: Անհամեմատ գայթակղիչ էր ոչխարի հոտի գլխին լինելը:

թշվառները

Սկզբում հատուկեմտ մուրացկաններ հայտնվեցին քաղաքում, որոնք ապրելու միջոց չունեին և հացի փող էին պահանջում անցորդներից:

Ապա ի հայտ եկան աղբարկող քչիկորդները: Նրանք զգվում էին ուզվողությունից և գերադասում էին ինքնուրույն հայթայթել իրենց հանապազօրյա

հացը:

Իրենց գոյությունը քարշ տալու նպատակով այստեղ-այնտեղ սկսեցին ուրախ երգել երգել թափառաշրջիկ երեխաները: Քաղաքը լցվեց զանազան գործիքների վրա նվազող երաժիշտներով:

Երգել և նվագել չիմացողները ունեցած-չունեցածը հանեցին վաճառքի: Արհեստավորները լցվեցին փողոց, որ ունևորներն աշխատեցնեն իրենց: Տարեցտարի թվարկված ու չթվարկված թշվառականների թիվն ավելացավ:

Հետո արդեն նրանց թիվն սկսեց ավելանալ ամսեմսիս: Ապա՝ օրեցօր: Այնուհետև՝ ժամ առ ժամ: Չքավորությունն անցավ բոլոր սահմանները: Քաղաքը պատեց համատարած չարիքը: Առաջինը նրան հանդիպեց իր աղբարկղից արտաքսվածը և հարցրեց.

- Դու ո՞վ ես:

- Չարիքը:

- Բա բարի՞քն ուր է:

Չարիքը հռչակեց նրա երեսին:

Այդ օրվանից չարիքի մատնվածները հերթով մեռնում են՝ այդպես էլ ոչ մի բարիք չտեսնելով:

ծերունին և մահը

Ծերունու մի ոտքը գերեզմանում էր: Ապրում էր հարկադրված, այս աշխարհի հետ հաշիվները մաքրածի և մահվանից առժամանակ մոռացվածի դժկամությամբ: Դրան ապրել ասելը չափազանցություն է: Դա անընթացիկ տևողությամբ սպասում էր: Այդպես վերջին տերևն է չորանում ծառին, այդպես ուշացած ուղևորն է մոլորվում լքված կայարանում:

Կյանքի հետ իր առնչությունը, իր միակ հենակետն այժմ ձեռնափայտ էր, և ձեռնափայտը սառնություն էր զգում իրեն ուղղված հայացքներում, ամբողջությամբ ներշնչում գետնին հենվելիս: Ծերունու տեսողությունը թեև պահպանվել էր, բայց գույներն արդեն խամրել էին, և բոլոր դեմքերն օտար էին իրեն: Քնելու ժամերին քունը կիսով չափ փախած էր լինում, արթնությունը մասամբ էր տարբերվում երագից: Մարդկանց և թռչունների ձայները, փողոցի աղմուկը լսում էր ասես ուրիշ աշխարհից:

Քաղաքային գերեզմանատան մատույցների անցուղարձը ծերունուն մի պահ գարմացրեց: Չարանքը փոխվեց հետաքրքրության, և ծերունին պարզորոշ գիտակցեց, որ ինքը դեռ ապրում է, իսկ ինչ-որ մեկն ահա մահացել է: Շքերդ դիակառքը ներս մտավ գերեզմանատան դարպասից: Ոստիկանների և զինվորականների առատությունից ծերունին գուշակեց, որ հանցացյալը նշանավոր մարդ է:

Թափորի հոսքը դանդաղեց: Անհոգ, մի տեսակ ուրախ թափոր էր: Մարդիկ բարձրաձայն խոսում էին, ասես ոչ թե թաղում էր, ոչ թե հրաժեշտի ծես էր, այլ հանդիսավոր դիմավորման արարողություն:

- Ես ո՞վ է մեռել, - հարցրեց թափորի զվարթությունից ապշած ծերունին՝ դիմելով կողքը կանգնած մարդուն:

Մարդը չսեւլու տվեց: Ծերունին օտար միջավայրում հայտնված անկոչ հետաքրքրասերի հայացքով գնում էր շուրջը և առայժմ չէր կողմնորոշվում: Մոտեցավ դարպասի մոտ խմբվածներին, որսաց նրանցից մեկի հայացքը.

- Ողորմի անցավորներիդ... - ասաց:

- Գնա, գնա ուրիշ տեղ, - սաստեց սա և շրջվեց: Վիրավորանքից ծերունին կարկանդեց. մուրացկանի տեղ են դնում:

Շուռ եկավ և այժմ էլ դարձավ իրար ականջի քչիչացող աղջիկներին.

- Ես ո՞նք թաղումն է, բալա ջան:

Աղջիկները ծիծաղեցին: Ծերունին սարսռաց. մի՞թե մահն իմաստագրվել էր այնքան, որ թափորի համար ծիծաղելի էր այն:

Ծերունին չգիտեր, որ հանցացյալն իրականում շատ վաղուց է մահացել, իր ծնվելուց էլ առաջ: Նա նաև չգիտեր, որ յոթ չէ՝ յոթանասուն և հարյուր յոթանասուն տարվա մեռելը կարելի է նաև այս տարի թաղել: Դա նրան բացատրեց մի երիտասարդ ոստիկան, ասելով, որ ոչ թե թաղում են կատարում,

այլ վերաթաղում:

տարաբախտ գիծը

Ով և ինչու էր փորել այդ հորը՝ ոչ ոք չգիտեր: Այդ կողմերով անցնող մի գիծ որոշեց, որ հորը փորել են մի նպատակով՝ ինքը մի քար գտնի ու զցի դրա մեջ:

Նա այդպես էլ արեց. մի քար գտավ մոտակայքում, տնքտնքալով բերեց ու զցեց հորը:

Իր արածից գոհ ու երջանիկ գիծը գնաց, նստեց մի բարձր տեղ և սկսեց նայել, թե ինչ են անելու խելոքները:

Շատ էր նստել թե քիչ հանկարծ նկատեց խելոքներից առաջինին, որ անցնում էր հորի կողքով: Սա մի պահ կանգ առավ, նայեց ու տեսավ քարը:

Գնաց, աստիճան բերեց, իջեցրեց հորի մեջ, ինքն էլ իջավ, ապա քիչ անց դուրս եկավ հորից, ձեռքին պարանի ծայրը: Խելոք լինելուց բացի նաև ուժեղ էր պարանը բաշելով՝ քարը հանեց փոսից:

Գիծը չհասկացավ էլ, թե որտեղից այդ խելոք մարդուն պարան: Չարմանքից նրա բերանը երկար ժամանակ բաց մնաց: Նա հասկացել էր, որ հորը փորել էին ուրիշ նպատակով և այլևս երբեք դրա մեջ քար չզցցեց: Գնաց ուրիշ հոր փնտրելու:

Իր կյանքում ընդհանուր առմամբ նա քար զցեց հարկադրի մեջ, և ամեն անգամ տարբեր խելոք մարդիկ առանց որևէ մեկի օգնության՝ միայնակ հանում էին քարերը:

հետաքրքրասերը

Ի նշան երախտագիտության մեկը ձի նվիրեց իր բարեկամին: Վերջինս մի ձեռքով բռնեց սանձը, մյուս ձեռքը ձիու դնչին տարավ, նախ վերևի, ապա ներքևի շրթունքները ձգեց և հաշվեց ձիու ատամները:

Չին նվիրողը զարմացավ, բայց ծայր չհանեց: Բարեկամը տուն հրավիրեց նրան, հյուրասիրեց:

- Ինչո՞ւ հաշվեցիր նվիրած ձիու ատամները, - երրորդ բաժակը խմելուց հետո չհամբերեց ձին նվիրողը:

Եվ բարեկամը բացատրեց, որ ինքն ուղղակի ուզում էր իմանալ, թե ձիերը քանի ատամ են ունենում:

պապն ու թոռը

- Պապ, այ պապ:

Պապը շտկեց մեջքը և հարցական նայեց հաղթանակած թոռանը:

- Մի խորհուրդ տուր, - պահանջեց թոռը:

- Գիտունի հետ քար քաշի, անգետի հետ փլավ մի կեղ, - ամմոնայան ասաց պապը:

- Սովից մեռնեն, հա՞, - ըմբոստացավ թոռը, - քարը քաշեմ որ ի՞նչ:

- Հարցրիր պատասխանեցի, - տմբաց պապը, - ինձա դու գիտես:

Թոռը գնաց:

Բայց ոչ թե գիտունի հետ քար քաշելու, այլ անգետի հետ փլավ ուտելու: Կերան, կշտացան, գնացին տեսան գիտունը սոված-ծարավ իր քարը քաշում է:

Քանի որ թոռը իր խորհուրդը չէր լսել՝ պապը հուսահատությունից մեռավ:

Թոռը մինչև խոր ծերությունը ընկերություն արեց և փլավ կերավ անգետի հետ, իսկ գիտունը ծանր աշխատանքից շուտով կորցրեց առողջությունն ու նույնպես մեռավ:

հիասթափություն

Մի գյուղացի որոշեց շատ ցորեն ցանել, որ հնձի ու հաց ունենա: Ցորենը ցանեց, աղոթք արեց, որ ոչ կարկուտ գա, ոչ էլ երաշտ լինի: Աստված լսեց նրա աղոթքը: Մեղմ, լավ տարի եղավ:

Արտը հնձելիս, սակայն, գյուղացին գարմանքով տեսավ, որ ոչ թե ցորեն է հնձնում, այլ մոլայխտ:

ՄԱՆՏԵԽՆԻԿԻ ԻՆՏԻՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Շատ Նոր Կյանք գյուղի ակումբի պահակ ժՅՈՒԼՎԵՆՆ ԶԻՐՈՒՄՅԱՆԻ հերթական նամակը՝ հասցեագրված աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար ԱՂՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ: Բարև Աղվան ջան: Կենդանուհի, որ էսպես ուղղակի են դիմում, բայց դու հասարակ տղա ես երևում, ինչպես ասում են՝ մեր մարդն ես, և դա շատ լավ երևում է քո արտաքինից ու հագուկապից, էնպես որ՝ ինձ կհասկանաս: Ընդհանրապես ես, Աղվան ջան, եթե չգիտես, Շատ Նոր Կյանք գյուղի ակումբի պահակ եմ աշխատում: Բայց քանի որ աշխատավարձ վերջին անգամ ստացել եմ դեռ կոմունիստների օրոք, ստիպված ձեռքի հետ սանտեխնիկություն եմ անում: Ոսկի ձեռքեր ունեմ, էնպես որ կռանք կպցնելը, փոխելը և եթե ինչ-որ բան ծորում Կ՝ փակելը ինձ համար հարց չի: Ու որոշեցի թերթում հայտարարություն տալ. թե էսպես ու էսպես, եթե պետք է՝ կարող եմ սանտեխնիկական ծառայություններ մատուցել: Ձանգեք այսինչ հեռախոսահամարով: Դե, հիմա շատերն են թերթում էլ տեսակ հայտարարություններ տալիս: Ես էլ որոշեցի հետ չմնալ: Իսկ նրանք՝ իրենց թերթում, Աղվան ջան, ամեն ինչ խառնեցին ու իմ հեռախոսի համարը դրեցին կողքի հայտարարության տակ: Իսկ էնտեղ մի տակարար էնպիսի՝ բան էր առաջարկում: Լեզուս չի պատվում ասել: Գրում է. «Ինտիմ ծառայություններ կմատուցեմ ցանկացած տարիքի կանանց»: Ու իմ հեռախոսը: Իսկ ես այս, Աղվան ջան, բանից բեխաբար տանը նստած եմ, մի կտոր հաց եմ ուտում ու հանկարծ իրար հետևից զանգեր են գալիս: Կանացի ծայրը հարցնում է. «Ձեր ծառայությունները մատուցելու հարցով ե՞րբ կարող եք գալ ինձ մոտ: Ես ասում եմ. «Թեկուզ հիմա: Բայց դե, ի՞նչ եք գիշերով կանչում: Այ, վաղը ընդամենը յոթ հատ կանչ ունեմ, հետո կարող եմ ձեզ մոտ էլ մտնել: Իսկ նա, Աղվան ջան, վրդովված հարցնում է. « Իսկ յոթ կանչից հետո դուր



ին ինչի՞նք եք պետք: Ես նեղացա ու հպարտ պատասխանեցի. « Մի ասեք: Դուք ինձ դեռ չեք ճանաչում: Ընդհանրապես, ես օրվա ընթացքում տասներկու կլիենտ եմ սպասարկում: Վաղը համ էլ հարևանուհիս է խնդրել իրեն առանց հերթ սպասարկել: Նրա մոտ ինչ-որ բան է ճեղքվել: Իսկ ամուսինը, թարսի պես, հիվանդ է: Երկու շիշ արաղ խոստացավ: Կինն ասում է. « Լսեք, ես ոչինչ չեմ հասկանում: Չերիք չի, որ ուզում եք յոթ կանչից հետո գալ ինձ մոտ, այն էլ հարբած: Ես նրան, Աղվան ջան, համբերատար բացատրում եմ. « Դասկացեք, մեր գործում առանց խնելու չի լինում: Այս իմնականում խոնավություն մեջ ես աշխատում: Դամ էլ ֆիզիկապես է ծանր լինում: Պատահում է յոթ քրտինք ես թափում մինչև ֆլանցեցը հարմարեցնում ես պատրուկին: Նա ասում է. « Իսկ դուք կարող եք չհայիոյել, ես կուլտուրական կին եմ: Ես ասում եմ. « Ուրիշ ո՞նց ասեմ: Ֆլանցեցը սաղ աշխարհում էլ ֆլանցեց ա: Պատուրկի մասին էլ չեմ խոսում: Իսկ նա, Աղվան ջան, չգիտես ինչու, լսափողը դրեց: «Տարօրինակ կին է, « մտածում եմ, « կյանքում ոչ մի անգամ ձեռքիս պատրուկ կա չի բռնել...»: Ու հանկարծ, Աղվան ջան, նորից եմ զանգում: Կանացի ծայրը հարցնում է. « Իսկ ինչպե՞ս եմ վճարվում ձեր ծառայությունները: « Ինչպես թե՛ ինչպե՞ս»: Ինչ հիմար հարց է, ես էլ, հիմարավարի պատասխանեցի. « Կարելի է, « ասում եմ, « իհարկե, դրամով: Բայց ավելի լավ է մթերքով: Նա՛ թե. « Դուք ի՞նչ է, դրանից հետո համ էլ մթերքով եք վերցնում: « Ինչի՞ չվերցնեմ որ, « ասում եմ, « չնայած, իհարկե, նայած ծառայության: Մի բան է, ասեմք, պրոկլադկա փոխելը: Լրիվ այլ բան գասարենի մաքրելը... Իսկ նա և էնպիսի՝ մանրակրկիտ աշխատանք է պատահում էն էլ դժվարամատչելի տեղում: Կամ՝ պատահում է, որ ինչ-որ

պառավի հետ օրվա կեսը տանջվում ես: Նրա մոտ ամեն ինչ արդեն լրիվ ժամագոտած է: Տակից նայում ես՝ Աստված իմ: Երևում է էնտեղ արդեն հարյուր տարի ոչ ոք չի մտել: Ստիպված ես լինում զագուլուկա դնել: Կինը ասում է. « Դուք, ի՞նչ է, պառավների մոտ էլ եք գնում: « Նրանցից, « ասում եմ, « ամենից շատ եմ կանչեր ստանում: Էստեղ, Աղվան ջան, սա էլ լսափողը զգեց: Չհասցրի հեռախոսից էն կողմ գնալ, մեկ էլ զանգը նորից հնչեց: Մի կին հարցնում է. « Դուք ձեր մասնագիտությունը որտե՞ղ եք սովորել: Էստեղ չընկալեցա ու տրաքեցի. « Որտե՞ղ, որտե՞ղ... Ի՞նչ կապ ունի: Դատուկ դասընթացներ եմ անցել: Իզուր ժամանակ մի կորցրեք, միանգամից ասեք, ձեր ո՞ր տեղն է ճեղքվել: Որ կարողանամ որոշել, թե հետս ո՞ր գործիքը վերցնեմ: Էստեղ ես նույնիսկ հեռախոսով զգացի, Աղվան ջան, թե այդ կնոջ աչքերը ոնց չռվեցին: « Իսկ, ի՞նչ է, ձեր գործիքը մեկ հատ չի՞: Ես ասում եմ. « Կարող ա՞՞ ձեր համար լակոտ եմ: Ո՞նց կարելի է մի հատ գործիքով: Ես ամեն մի ծառայության համար առանձին գործիք ունեմ: Տարբեր, այսպես ասած, տրամաչափի: Ես մի կինը, Աղվան ջան, շատ հետաքրքրասեր դուրս եկավ: Դարցնում է. « Այ, սերվիս եմ ասել: Եվ ի՞նչ, դուք բոլոր տրամաչափերն ունե՞ք: Ես ասում եմ. « Եթե ինձ մոտ էլ չլինի, մեր հարևան Գալուստին կերբեմ: Թոշակառու մարդ է, միևնույն է, բան ու գործ չունի: Էստեղ էլ մեկն էլ լսափողը դրեց: Ու հանկարծ հայտարարությունով էլ թերթը աչքովս ընկավ: Մամա՛ ջան: Դեռաքրքիր է, էլ կինն ինչի՞ մասին մտածեց, երբ որ նրա հետ գործիք էինք քննարկում: Ու էստեղ ես հասկացա, Աղվան ջան, որ մասնագիտությունս պետք է շտապ փոխել: Գուցե քո նախարարությունում ինչ-որ բան գտնե՞ս ինձ համար: Կամ, ծայրահեղ դեպքում, մի լավ խորհուրդ տաս: Աշխատանքի նախարար ես ի վերջո:

Խորհիմ հարգանքներով՝ Շատ Նոր Կյանք գյուղի ակումբի պահակ ժՅՈՒԼՎԵՆՆ ԶԻՐՈՒՄՅԱՆ

Վատ մարդը

Ուրիշներին չսիրող մի մարդ առավոտից իրիկուն փոս էր փորում նրանց համար, և բոլորը հերթով ընկնում էին այդ փոսերը: Օրը մի քանի հոգի փոսն էին ընկնում և վնասվում, ու այդ ամենը նրա ձեռքի գործն էր: Նա ապրեց մինչև խոր ծերություն, ոչ մի անգամ չընկավ ուրիշի համար իր փորած փոսը, որովհետև ինքը շատ զգույշ և շատ վատ մարդ էր:

Էշի երկիր

Փոքրիկ տղան ամեն օր հետևում էր հարևանի հավերին, ու հենց որ սրանցից մեկնունեկը ձու էր ածում՝ թաքում մոտեցնում էր ու վերցնում ձուն: Դարևանը երկար ժամանակ գլխի չէր ընկնում, որ ինչ-որ մեկը գողանում է իր հավերի ձվերը: Ի վերջո մի օր տեսավ: Բռնեց տղային, ձուն խլեց ձեռքից և ասաց. « Դու հիմա ձու ես գողանում, որ մեծանաս՝ ձի էլ կգողանաս: Անցան տարիներ: Տղան մեծացավ: Բայց նա ոչ թե ձի գողացավ, այլ էշ, քանի որ էլ կողմերում ձի չկար: Էշը տարավ ու կապեց հարևանի դռանը, ի հատուցումն նրա հավերի ձվերի, որ մի ժամանակ գողացել էր:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՅ

Ըստ հայ պատմաբանների՝ առաջ հայ քաղաքական գործիչները գրում էին **ՆԱՄԱԿ ՋՈՒՍԱԳ ՔԱԳԱՎՈՐԻՆ**, հիմա՝ **ՆԱՄԱԿ ՔՈՒՐՔ ՎԱՐՋԱՎԵՏԻՆ**:

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ քաղաքագետների, Դայաստանում **հեղափոխությունն անգույն** ա լինելու, բայց **հակահեղափոխությունը հաստատ երկնագույն** ա լինելու:

ՎԵՐՋԸ ԵԿԵԼ Ա

Ըստ վերլուծաբանների, Դայաստանի **իշխանությունների բոլոր ճանապարհները** տանում են **Դեմոկրատիայի** մոտ:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՅ

Երբ որ հայերը մշակույթ ունեին, դրոզները ծառերի վրա էին, իսկ երբ **դրոզները հեղափոխություն** արեցին, **հայերն** էին արդեն **ծառերի վրա**:

ՓՈՓՈԽՎԱԾ ԿԱՐԳԱԽՈՆՆԵՐՈՎ

Ըստ վերլուծաբանների, 2003թ. Ռոբերտ Քոչարյանը կոալիցիային ասում էր. «**Աշխատենք** միասին», 2004-ին՝ «**Ուտենք** միասին», իսկ 2005-ին՝ «**Կմարսե՞նք** միասին»:

ԽԵՍՏ ՉՔԱՂՎԱԾ ՄԱՐԴԻԿ ԵՆ

Ըստ ԱԺ լրատվական ծառայության, խորհրդարանում սովորաբար քվորում չի ապահովվում, քանի որ պարզապես անհնար է **միաժամանակ մասնակցել** և **խորհրդարանի** աշխատանքներին և **ՏԵՑ-ի** կրուզի ռազմականներին:

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՆԵՐՁԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ

Վրաստանից ռուսական բազաները հանելուց հետո **հայաստանցիները պահանջելու են Դայաստանից հանել** դարաբաղյան բազաները:

ԽԱԹԱԲԱԼԱ

Սամվել Խալաթյան

Դժոխքից արքաքավածը

Հանդերձյալ աշխարհի հասնելուն պես հերթապահ հրեշտակը հանգուցյալների ուղեկցեց Գաբրիել հրեշտակապետի նրստավայրը: Մուտքի մոտ, լուսամուտից կախված եվրախորհրդի նիստին հետևող նրա գործընկերը մեզ վրա թուզիկ հալացք գցելով հարցրեց.

- Աֆրիկայի սովյալների՞ց են:
- Չէ, Հայաստանի խումբն է, - պատասխանեց ուղեկցողը:
- Եռագույն դահլիճը տար, - ասաց ու շարունակեց լսել գեկուցողին:
- Նստած սպասում ենք:
- Հնչեցին շեփորները:
- Ոտքի՛, հրեշտակապետն է գալիս, - կարգադրեց հրեշտակը: Բուլդոզ ոտքի կանգնեցինք՝ բացի մեկից:
- Ինչու՞ չես ոտքի կանգնում, - նկատեց հրեշտակը:
- Վրաս... հալ չկա՛...», - մի կերպ արտաբերեց հանգուցյալը:
- Էնքան մեռած ես, որ չես կարող երկու վայրկյան ոտքի վրա մնա՛լ:
- Չէ՛...
- Չլինի՞ ուսուցիչ ես:
- Հա՛...
- Պարզ է:

Դռները բացվեցին ու սիգաճեմ, ոտքերն ամպոտ՝ ներս մտավ Գաբրիել հրեշտակապետը:

- Փա՛ռք Գաբրիել հրեշտակապետին, - հիացած ծափահարեց գիրուկ հանգուցյալը:

Գաբրիելը հոնքի տակից նրան նայեց.

- Ո՞վ է, - հարցրեց հերթապահին:
- Կուսակցական ակտիվիստ է:

- Ուղարկեք քավարան, - կարծ նետեց հրեշտակապետն ու ձեռքով հասկացրեց, որ կարող ենք նստել: Հերթապահը նրա առջև դրեց մեր անձնական գործերը:

- Այդպե՛ս, - ծոր տվեց Գաբրիելը, ապա դիմեց մեզ: - Ես ձեր երկրից անջափ գոհ եմ: Արդեն քանի տարի է՝ և՛ պլանն են կատարում, և բոլոր տարիքային խմբերից հանգուցյալներ են համբառնում անդրաշխարհ: Բավարար մակարոնակի վրա են նաև մահացումների պատճառները. և՛ սպանությունների գծով են արդյունքները գոհացուցիչ, և՛ սխալ բուժման հետևանքների գծով: Ինքնասպանությունների թվերն էլ ոչինչ, բավարար քանակ է ապահովվել:

Սովահարությունների թիվն էլ վատ չէ, սեզոնին՝ ցրտահարություններից մահացության պլանները գերակատարվեցին... Միայն մի գրաֆայով է թերակատարում արձանագրվել խոր ծեղրությամբ՝ բնական մահով: Բայց դա Հայաստանի համար պրոֆիլային չէ, այնպես որ, ԱՊՀ երկրների շարքում Հայաստանն այսօր ոչ ոքի չի գիջում: Լավ, անցնենք գործի: - Բացեց թղթապանակներից մեկը: - Աբգարյան Կիրակոս: Ո՞վ է, թող ոտքի կանգնի:


Վերջին շարքում նստած փողկապավոր ոտքի կանգնեց:

- Կարո՞ղ ես ասել, թե ինչքան կաշառք ես վերցրել, - հարցրեց հրեշտակապետը:

- Երանելի, - ամոթխած ժպտաց Կիրակոսը, - չեմ հիշում, շատ է եղել... դե, մի մասն էլ, գիտեք, շեֆերին էր գնում...

Հերթապահ հրեշտակը, հուշիկ մոտենալով Գաբրիելին, նրա ականջին ինչ-որ բան շնջաց:

- Ինքն է, հա՞, - ժպտաց Գաբրիելը և սկսեց թերթել անձնական գործը: - Տվյալները վատ չեն՝ օգնությունների յուրացում, թալան... Քո շնորհիվ, ցուրտ ու մութ օրերին բավական քանակով մարդիկ համբարծվեցին: - Գաբրիելը շրջվեց հերթապահի կողմը, - դրախտի ուղեգիր տվեք,



ծառայություններ ունի մատուցած:

Հաջորդը ուսուցիչն էր:

- Այ մարդ, - նրա վրա բարկացավ հրեշտակապետը, - քեզ, ի՞նչ է, հատուկ հրավե՞ր էինք ուղարկելու, որ մեռնեիր: Չէիր տեսնու՞մ, որ օր օրի կյանքը վատանում էր, ռոճիկդ հերիք չէր անում... Մինչև օպտիմալացումը չմտցրեցին խելքի չեկար: Չի՛ կարելի, չէ՛... Մի քիչ էլ դուք ֆայն ունեցեք: Ձահլես գնում է ես կենդանի-մեռել դասատուներից...

- Ախր... վրաս... հալ չկար..., - փորձեց արդարանալ ուսուցիչը:

- Չայնդ կտրի՛ր... «հալ չկար»... Բժշկի դիմելու հալը կար, մեռնելու համար՝ չկար... գլուխդ էիր մտցրել, թե պետպատվերով կբուժեն: Բա գլխի չընկա՞ր, որ ճակատագիրդ որոշված է, ինչու՞ էիր համառում: Դժոխք ուղարկեք:

Ուսուցիչ թևերն ընկած հրեշտակները նրան դուրս տարան:

- Բաղդասարյան Սանասար:

- Ես եմ, - ոտքի կանգնեց կողքիս նստածը:
- Ո՞վ ես, ի՞նչ մարդ ես, - նրա անձնական գործերը բացեց Գաբրիելը:
- Լրագրող եմ:

- Ի՞նչ... Այ տղա, գրողը ես եմ: Եղ ինչե՞ր ես դուրս տալիս:

- Լրա՛-գրող, - շեշտեց Սանասարը:

- Հա՛, լրագրող... Ըն՛-դա՛... Էն Արտեմ Հարությունյանին դու էի՞ր քննադատել:

- Ես՛:

- Բախտդ բերեց, - ժպտաց հրեշտակապետը: - Թե Արտեմը չլինե՛ր՝ գործդ բուրդ էր:
- Շնորհակալություն, - ուրախացավ Սա-

նասարը:

- Մի վռագի՛ր, մի վռագի՛ր... հրե՛ս, մեղքեր էլ ունես գործած՝ դեկավարներին ես քննադատել, կոալիցիային... Բա դու չգիտե՞ս, որ մենք որոշել ենք Հայաստանում մի պուճուր մասնաճյուղ բացել՝ դուստրանդրաշխարհ: Ինչու՞ ես մեր գործին խլում:

- Բա ես ի՞նչ իմանայի...

- Այ տղա, օպոզիցիան իր չհասկացող տեղով գլխի ընկավ, սակվեց, դու՛ գրագետ մարդ, չէիր հասկանու՞մ: Լավ, քո գործը վերջում կվերանայենք, հակասող բաներ շատ կան: Սիկոդոսյանն ո՞վ է:

- Ես եմ, - ոտքի կանգնեցի:

- Դու՞ ինչու ես եկել:

- Մեռել եմ... Ու՞ր գնայի, - զարմացա ես:

- Դու չես մեռել, - նյութերս թերթեց հրեշտակապետը, - քոնը կլինիկական մահ է: Ետ կգնաս:

- Չգնամ, էլի՛... խնդրում եմ, - համարձակվեցի ես:

- Այ տղա, դու հո չե՞ս գժվել:

- Գժվել եմ: Խելագար եմ:

- Հա՛՛ - շրջվեց դեպի հերթապահը:

- Եի՛շտ այդպես, խելագար է, - հաստատեց հերթապահը:

- Ի՞նչ նշաններով է արտահայտվում:

Հրեշտակը շտապեց գեկուցել.

- Խորապես համոզված եմ, թե իր երկրում արդարություն կա, կոռուպցիային վերջ կտրվի, գործազրկությունը կվերանա, ընտրություններն արդար կլինեն...

- Ծանր դեպք է, - հոգոցով ասաց հրեշտակապետը: - Եղ Հայաստանում զգուշացրեք, որ մարդկանց չգժվեցնեն ու զցեն մեր ջանը... Ես խեղճ մարդուն տես ինչ օրն են գցել:

- Հա, բա՞, - սրտապնդվեցի ես:

- Դու ծայնդ կտրի՛ր, - սաստկեց Գաբրիելը, - քեզ խոսք չի հասնում: Կլինիկական մահվանից դուրս կգաս՛, կգնաս ձեր տուն: Եղա՛վ, - թղթապանակը փակեց:

- Ախր, ո՞ր մեղքիս համար, ցավդ տանեմ...

Տանեցիք ահագին պարտքի տակ են ընկել, որ դագաղ առնեն, հոգեհաց տա՛ն... հագիվ տեղ են հասել... Դժոխքում մի պուճուր անկյուն տվեք, կուչ գամ, տանջվեմ...

- Հալա արա խելքին տես, - հեզմեց Գաբրիելը, - հետո էլ ասում է՝ գիժ եմ... Եղ ո՞վ չգիտի, որ Հայաստանից եկածներդ դժոխքում ավելի լավ եք զգում... Չէ՛: Ետ գնա, շարունակիր ապրել: Ամեն ինչ իր ժամանակին: Օրհասդ կգնա, կկանչենք...

...Աչքերս բացեցի՝ կինս վրաս հակված էր:

- Այ մա՛րդ, - մղկտաց նա, - ետ եկա՞ր... Ես էլ մտածում էի, թե տեղ ես հասե՛լ, էսօր էզուց էլ ինձ կկանչես ու ես պարտքերդ տալուց կազատվե՛մ...

- Չընդունեցին, ի՞նչ անեմ, - արդարացա ես:

- Բա հիմի ի՞նչ ենք անելու:

- Ճարներս ի՞նչ... Ապրելու ենք:
- Առաջվա պե՛ս...
- Այ էղ մեկը չէ: Խելքի եմ եկե՛լ...

Մեր հյուրն է բանաստեղծ, քարգմանիչ, հրապարակախոս Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

ԱԼԵՆ ՌԱՄՁԵՅ (1686-1758)
ՀԱՅ ԵՎ ՔԱՐ

Բանաստեղծ էր նա... Ապրում էր քանի՜ Մասնակից չեղավ առատ սեղանի: Եվ ոչ ոք՝ ընկեր, ծանոթ, դրացի, Չկանչեց նրան երբևէ հացի: Սակայն պոետին հիշեցին հանկարծ, Երբ այս աշխարհից նա մեկնեց անդարձ, Հողին հանձնեցին մեծ շուքով նրան Եվ քարե արձան դրեցին վրան:

Պոետի հանդեպ բախտն էր սրտացավ. Հաց էր ուզածն իր, բայց քար ստացավ: *Անգլերենից քարգմանեց Խորեն Գասպարյանը*

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

Սամակատի ումուղին

Ավիակատաստորոֆայի գոհ երեք լոռեցի էն աշխարհում կանգնում են Գաբրիել հրեշտակապետի առջև:

- Դուք դավաճանե՞լ եք երբևէ ձեր կողակիցներին, - հարցնում է հրեշտակապետը: Երկուսը դրական պատասխան են տալիս:

Հրեշտակապետը նրանց մի-մի սամակատ է տալիս և ասում.

- Գնացեք դժոխքում քշեք:

Երրորդն ասում է, թե կյանքում կնոջը չի դավաճանել: Հրեշտակապետը սրան մի մերսեղես է տալիս.

- Գնա դրախտում վայելիր...

Որոշ ժամանակ անց դրախտ-դժոխք խաչմերուկում հանդիպում են երեք լոռեցիները: Սամակատ քշող երկուսը երրորդին հարցնում են.

- Լսի՛, էդ ընչի՞ ես դիվար. մերսեղեսը տակիդ դրախտում քե՞ք ես քաշում:

- Է՛, տղերք, - հոգոց է հանում դրախտի բաժին դարձածը: - Ես երկու օրը կնկանս տեսա՝ սամակատի ումուղին էր...

Ա՛յտա, էդ սիլոդկա էի՞ն կերել...

Լոռեցի Սաթոն Դեբեդի ափին նստած՝ գինվորական սաղավարտով կուշտ-կուշտ ջուր էր խմում: Երկու երևանցի մոտենում են: Մեկը թե՛ «Ախպեր ջան, ի՞նչ կլինի էդ կասկովդ իմ տեղն էլ խմես»: «Խմեմ, ա՛յր...», - Սաթոս մի անգամ էլ է խմում: «Մի հատ էլ, հա՞»: «Է՛, խմեմ», - մեկն էլ է խմում: Հետո երկրորդ երևանցին է խնդրում՝ իր տեղն էլ խմել: Մի անգամ էլ է խնդրում: Սրանց գնալուց հետո Սաթոն զարմացած մատը տնկում է՝ «Ա՛յտա, էս շա՛շան որդեմին սիլոդկա էի՞ն կերել...»:

Նաղըն ու նիսյան

Հայր ու տղա որոշում են առևտրով զբաղվել: Մի քանի օր հետո տղան գալիս է հորը հարցնում.

- Այ հեր, էդ առևտրից մեճակ մի բան չեմ ջոկըմ՝ նաղըն ո՞րն ա, նիսյան՝ ո՞րը...

- Հմի բացատրեմ, - ասում է հայրը: Հլա մորդ կանչի:

Տղան կանչում է:

- Այ կնիկ, որ մի ամերիկացի քեզ հազար դոլար տա մի գիշերվա համար՝ համաձայն կըլնե՞ս:

- Խի՞ չեմ համաձայնի որ..., - ասում է կինը:

- Հմի էլ կընկանդ կանչի, - դիմում է հայրը տղային: Տղան կանչում է:


- Այ հարս, որ մի ամերիկացի քեզ մի գիշերվա համար հազար դոլար տա, համաձայն կըլնե՞ս:

Հարսն էլ է դրական պատասխան տալիս.

- Էն էլ ո՞նց...

Հայրը դառնում է տղային.

- Տղա՛ ջան, դե հմի լավ լսի. որ մեր տանը երկու հատ դուրս ընկած կա՛՝ էդ նաղը ա: Որ երկու հազար դոլար էլ ամերիկացունց մոտ փող ունենք՝ էդ էլ նիսյա ա:



Սա ինձանից քյառ ա...

Տարեց մի լոռեցի մոր թվայնացված հեռախոսով հավաքում է իր բարեկամի համարը:

- Համարը ժամանակավորապես հնարավոր չէ կանչել, - լսվում է ընկալուչի միջից: - Ինչ ա՞..., - հարցնում է լոռեցին:

Նույնը կրկնում է անգլերեն, ռուսերեն, դարձյալ հայերեն և այդպես շարունակ:

- Հա, է՛լավ, լսեցի, - ասում է լոռեցին, բայց ընկալուչի միջից շարունակվում է նույն պատասխանը:

- Ասինք՝ լսեցի, էլի, - գայրանում է ծերունին ու դիմում կնոջը, - էս դանջոն ինձանից քյառ ա՞...

Իմ տեղը՝ մըլիցուն ա ձեն տվել

Մեկը գնացք է նստում և ուղեկցորդին ասում.

- Ախպեր ջան, որ Կիրովական հասնենք՝ ինձ ձեն կտաս:

Հանում է պիջակը, կախում ու պառկում քնելու:

Վանաձորի կայարանում ուղեկցորդը նրան արթնացնում է: Սա շտապելուց հագնում է իր դիմաց պառկած ոստիկանի համազգեստը, իջնում: Կայարանի սրահում նայելով հայելուն՝ գայրացած ասում է.

- Շան տղի պառկադնիկն իմ տեղը մըլիցուն ա ձեն տվել...

Կարատե OT И ДО

- Ախպեր, դու ի՞նչ սպորտ ես պարապում...
- Կարատե-դո, իսկ դու՞...
- Ախպեր, ես էլ՝ կարատե OT И ДО...

Հա՛յ-հա՛յ...
(լուծողականի փոխարեն)

Վերջերս արթնացա տարօրինակ մի երագ տեսնելուց հետո: Արթնացա ու... խաչակնքեցի: Ախր, էպես էլ երա՞գ կլինի...

Ուրեմն, իբր ինձ այցի է եկել այնուլուրակային մի քաղաքակրթության ներկայացուցիչ՝ Հա՛յ-հա՛յ պետությունից: Իր անունն էլ Հա՛յ-հու: Վերջը, ինչ գլուխները ցավեցնեմ, նստեցինք զրուցելու: Եվ ի՞նչ պատմի: Ասում է՝ իրենց երկրում այսպիսի ասացվածքներ կան՝ «Գողը որ տանից լի-նի, եզը երդիկից կհանեն», «Շուներ շնից երկրում էլ մի տնից», «Շուներ շան միս չի ուտի», «Աղբը խրճիթից դուրս չեն հանի» և այլն, և այլն: Ասացվածքը՝ ասացվածք... Բայց, ասում է, դրանք գործածելը խստիվ արգելվում է. այնտեղ անպայման *ակնարկ* են փնտրում դրանց մեջ: Դե, իսկ ով *«ակնարկ է անում»*, պարզվեց ընկնում է գլխացավանք պատմությունների մեջ: Նաև ասում է՝ շներն այնտեղ գայլի փտրժակ ունեն ու հո չե՛ն խժռում...

«Իսկ ձեզ մոտ ո՞նց է», - հարցնում է: Ես նրան համոզում եմ, որ այստեղ այդպիսի ասացվածքներ չեն գործածում, գործածեն էլ՝ ի՞նչ, ու՞մ ինչին է... Չի հավատում... Ասում եմ՝ ակնարկն այստեղ գրական-գեղարվեստական, նաև լրագրային ժանր է ընդամենը: Դարձյալ չի հավատում: «Դու էդ ո՞ր երկրում ես ապրում», - հարցնում է: «Ինչպե՞ս թե՛ որ... Ազատ, անկախ, միա... ներողություն իմացյալ մի երկրում եմ ապրում», - ասում եմ՝ արդեն գայրանալով:

Իսկ ես Հայ-հույն ի՞նչ անի, որ լավ լինի: «Հայ - հա՛-հա՛յ», - ասաց մատը տնկելով, ետևից կայծեր թողեց ու թռավ, գնաց: Էդ որ տեսա՝ հիպոնոսացած կրկնում եմ՝ «Ազատ, անկախ, միա... ազատ, անկախ, միա...»:

Ու հանկարծ արթնացա աղիողորմ մի ծայնից: Վեր կացած տեսնեմ հարևանիս սև կատուն լուսամուտիս տակ մլավում է՝ «Միա՛-ու»:

Եսպիսի բաներ:

ԴԵ՛, ՄԻՄՈՆ ՋԱՆ, ԿԿՈՒՆ ԿԱՆՉԵՑ...

Հունվարին բաշխվեցին դեկտեմբերյան թոշակները: Ինչ խոսք՝ ուրախալի է, չեղածից հո լավ է: Ինչպես ասում են՝ «մի ծակ կփակի»: Թեև, անկեղծ լինենք, այնքան շատ ծակ կա. որ մեկը փակես: Այդ առթիվ թոշակառու Կարլեն Ավագյանը (որն, ի դեպ, ժամանակակից ֆուկլորը հարստացնում է իր արդիաշունչ տողերով) գրել է.

Թռակ ստացա, էն էլ մեծ բան չէ. Ոնց որ հունվարին կկուն գա կանչե:

Ինչևէ. «կկուն կանչեց» և թոշակառուներին «ավետում ենք» դե՛, Միմոն ջան, կկուն կանչեց, մուծիր էլեկտրականության, ջրի, աղբի, հեռախոսի... վարձերը, հացի «նիսիայի» պարտքերը... եթե կարող ես:

Փողի ճայնից

Հնագետների պեղումները վերջերս սենսացիոն մի հայտնագործության հանգեցրին: Հայտնաբերվեց մ. թ. (ա) - + ∞ դարաշրջանի հետաքրքիր մի պետության քաղաքակրթության միակ հուշարձանը: ՉԵՂՅԱԼ ԵՐԿԻՐ կոչվող այդ պետության տարածքում, ուր հիմա միայն կակտուսներ են աճում, գտնվեց *ժողովրդի գրքից* պարականոն մի հատված՝ «ՀԱՎԱՔՈՂԻ ԳԻՐՔ» վերտառությամբ:

Վերծանելով սեպագրերը՝ գիտնականները կարողացան կարդալ հայտնաբերված տողերը, իսկ մենք ականատես եղանք տեղում: Սիա դրանք.

- Աչքակապություն աչքակապությանց, - ասաց ՀԱՎԱՔՈՂԸ: - Խարում ինք ու խարում: Ամեն բանի ժամանակ կա՝ փողերը (և ժողովրդին) ֆռազցնելու և փողերը լվանալու ժամանակը, ոչնչից մեծ աղմուկ հանելու և լվացած փողերն անաղմուկ տանելու (ու տակով անելու) ժամանակը...

Ասում են՝ սույն պետությունն անհետացել է ՓՈՂԻ ծայնից (ցավոք, չկարողացանք պարզել՝ ո՞ր իմաստով է գործածվում «փող» բառը՝ այս երկրորդ դեպքում): Իսկ ՀԱՎԱՔՈՂԸ թռել է անհայտ ուղղությամբ:



Եվ համարվում է անհայտ բացակայող: **Լրատվությունը՝ ՉԵՂՅԱԼ ԵՐԿԻՐ պետության տարածք գործուղված, փողի ճայնից անժամանակ (ու ժամանակավորապես) խլացած, բայց հրաշքով փրկված և սաղ-սալամաթ վերադարձած Խ. Գ. Ի...**

«ԹՈՂ ՄԻՆՆ ԷԼ ԷՍ ՏԵՍԱԿ ԼԻՆԻ...»

«Լռեցիներին շատ են սիրում՝ միամիտ են ու սրամիտ: Եթե, օրինակ, վանեցիները ծաղրում են իրենց եղած-չեղած ժլատությունը, գյուներեցիները՝ իրենց մեծախոսությունը, քյավառցիները՝ իրենց արաղափրությունը, ապարանցիները՝ իրենց կենդանասիրությունը, ապա իմ սիրելի լռեցիները ծաղրում են իրենց միամիտ ազնվությունը: Այս առումով ազնիվ գործ է կատարել վաստակավոր լրագրող և գրող Արտավազդ Սաքանյանը, որը երկար տարիների ընթացքում հավաքել, գրի է առել իր հետ կատարված ծիծաղելի դեպքերն էլ գումարել ու հետաքրքիր գիրք է դարձրել»,- այսպիսի կարծիք է հայտնել 2004 թվականին լույս տեսած «Լռված հանաքներ» գրքի մասին Գլխավոր Ոգնի Արամայիս Սահակյանը:

Զնայած գրքի հեղինակը 77 տարեկան է, բայց շարունակում է աշխատել երիտասարդական ավյունով: Նա 1963թ. Հայաստանի ժուռնալիստների միության անդամ է, «Ուսանող մարզիկ» թերթի խմբագիրն է, Բնության և հասարակության մասին միջազգային ակադեմիայի իսկական անդամ, Հայաստանի մասնաճյուղի հունամի-

տար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, բանահավաք է ու գրող:

Գրքի մասին խոսքը կիսատ կլինի, եթե չներկայացնենք այնտեղ տեղ գտած լռված հանաքներից:

ԿՈՎԸ ԶԻ ԿԹԿ

Վահանը իմանում է, որ հարևանի կովը սատկել է, գնում է մխիթարելու: Պտտվում է սատկած կովի չորսբուրդը, գլուխը տըմտմբացնում ու թե.

- Տղե՛րք, էս կովը դժվար թե է՛լ կթվի...

ՄԵԿՆ ԷԼ ԹՈՂ ԷՍ ՏԵՍԱԿ ԼԻՆԻ

Գևոն հաճախ էր ամուսնալուծվում: Մի օր էլ տուն է տանում մի տգեղ կնոջ՝ աչքի մեկը կույր, ոտքի մեկը՝ կաղ, ձեռքի մեկը՝ թույլ-կախ ընկած:

- Ա՛յ տմաքանդ, էս ի՞նչ օրինակ էս բերել, բա սա հարս բերելու բան ա՞, - նախատում է հայրը:

- Դարդ մի անի, ա՛յ հեր, թող միճն էլ ես տեսակ լինի...

Ուուսլան ԹԱԹՈՅԱՆ

ԵՐԲ ՍԱՐԸ ԶԻ ԳՆՈՒՄ ՄՈՒՋԱՄԵՂԻ ՄՈՏ

Երբ իտալացի հռչակավոր ջութակահար Նիկոլո Պազանինին հայտնեցին անգլիայի թագավորի հրավերը հասանելիք հոնորարի կեսով արքունական պալատում ելույթ ունենալ, Պազանինին պատասխանեց.

- Իճնե՞ր ճանաչե՞ք կատարել: Նորին մեծությունը անհամեմատ փոքր գումարով կարող է ինձ լսել, եթե բարեհաճի գալ թատրոն՝ իմ համերգին:

«Горцарар»

Издаётся с июля 1999г.

**АВТОР ПРОЕКТА-
ВАГРАМ БЕКЧЯН**

Зам. гл. редактора -

Роза ГУЛЯН

**Գլխ. խմբագրի տեղակալ՝
Ռոզա ՂՈՒՅԱՆ**

ИЗДАТЕЛЬ

Издательский Дом

«ШАГАНЭ»

Лицензия серия ИД № 02313

Журнал зарегистрирован
в Министерстве Российской Федерации
по делам печати, телерадиовещания
и средств массовых коммуникаций
Регистрационный номер

ПИ № 77-5015

Авторские материалы
не рецензируются и не возвращаются.
Перепику с читателями редакция
не ведет. Мнение авторов может
не совпадать с мнением редакции.

*Материалы со знаком **Գ** публикуются
на правах рекламы.*

*Редакция не несет ответственности
за содержание рекламных объявлений.*

ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА -

Отпечатано

ОАО «Калужская типография стандартов»
Формат А3, объём 4,5 п.л.
тираж 1500 экз. Зак. № 941

Территория распространения:
Российская Федерация, страны СНГ,
зарубежные страны.

В номере использованы материалы
«АЗГ», «АРАВОТ», «ГА», «ЕТЕР»,
«ԿԱԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ», «ԻՐԱՎԱՆԿ»,
«ՉԻ», «НОВОЕ ВРЕМЯ», «ВОЗНИ».

Цена свободная.

**248001, г. Калуга,
ул. Суворова, 160.**

тел.: (0842)-56-59-29,

**E-Mail: gortsarar@mail.ru
E-Mail: gortsarar@kaluga.ru**

факс: (0842) 565-929,

www.gortsarar.ru



E-Mail: bshahanev@kaluga.ru